

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
FREEDOM OF INFORMATION CENTER OF ARMENIA

ԴՈՒ ՏԵՂՅԱԿ ԼԻՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՍ
YOU HAVE A RIGHT TO KNOW

տ ե ղ ե կ ա գ ի թ / b u l l e t i n N 3 4

Յ ո կ տ Ե մ ք ե թ / O c t o b e r 2 0 1 1
Յրապարակվում է 2001 թվականից/ Published since 2001

www.foi.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ / CONTENT

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տեղեկատվության ազատության շաբաթը Հայաստանում. 2011թ. սեպտեմբերի 22-28.....	5
Նոր վեբ նախագիծ տեղեկատվության ազատության ոլորտում.....	6
ՀՀ 10 մարզպետարանների կայքերի շնորհանդես	8
ՏԱ ամենամյա մրցանակաբաշխություն 2011.	9
Տեղեկատվության ազատությանը նվիրված առաջին երգը	11
Մատչելի տեղեկատվություն եւ տեղեկացված հասարակություն	12

ՀՈԴՎԱԾՆԵՐ

Ինտերնետով հրապարակային ծանուցումն անվճար է եւ առավել արդյունավետ	13
Յուրաքանչյուր քաղաքացի լրագրող է	16
Գրենական պարագաների գնումները նախարարություններում 2009-2011թթ.....	18
Տեղեկատվական վեճերի խորհրդի եզրակացությունը «Հայկական ժամանակ» օրաթերթում հրապարակված հոդվածի վերաբերյալ.....	23
Ընդդեմ «Զորորդ ինքնիշխանություն» օրաթերթի գործի վերաբերյալ Տեղեկատվական վեճերի խորհրդի եզրակացությունը	25
Վիրավորանք եւ զրպարտություն. օրենսդրական կարգավորումը եւ դատական պրակտիկայի խնդիրները.....	28
ՍԵՎ ՑՈՒՑԱԿ.....	33

ENGLISH VERSION

Freedom of Information Week September 21-28, 2011.....	34
Freedom of Information Center of Armenia launches new website.....	35
Presentation of the Websites of the 10 Regional Administrations.....	36
FOI Annual Award Ceremony 2011	37
The First FOI Song.....	38
Online Public Notifications are Free and more Effective.	39
Black List 2011, 2nd Quarter (April-June).....	41

Ծրագրի ղեկավար՝ Շուշան Դոյդոյան
Project Director Shushan Doydoyan



«Դու տեղյակ լինելու իրավունք ունես» տեղեկագիրը հրապարակվում է Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կողմից իրականացվող «Տեղեկատվության ազատությունը որպես համայնքային մասնակցության միջոց» ծրագրի շրջանակում, Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության տրամադրած աջակցությամբ:

Հոդվածներում արտահայտված տեսակետները հեղինակային են եւ չեն արտահայտում ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության տեսակետը:

Տեղեկատվության ազատության շաբաթը Հայաստանում. 2011թ. սեպտեմբերի 22-28

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի գործունեության 10 ամյակի առիթով 2011թ. սեպտեմբերի 21-28-ը կենտրոնն առաջին անգամ անցկացրեց Տեղեկատվության ազատության շաբաթ՝ տեղեկատվության ազատության գաղափարը հանրաճանաչ դարձնելու նպատակով:

Աշխարհի ավելի քան 100 երկրներում, որտեղ ընդունվել է գործում են ՏԱ մասին օրենքներ, ամեն տարի սեպտեմբերի վերջին շաբաթը նվիրում են տեղեկատվության ազատությանը: Այդ օրերին քաղաքացիական հասարակության անդամներն իրականացնում են ամենատարբեր միջոցառումներ՝ հրապարակային կառավարման ավանդույթներ ձեռնարկելու, կառավարությունների բացառությունն ու հրապարակայնությունը խրախուսելու, միաժամանակ հրապարակայնորեն քննադատելու փակ ու գաղտնի գործունեությունը:

«Տեղեկատվության ազատության շաբաթի» հիմնական նպատակն էր հանրությանը լայնորեն ներկայացնել տեղեկատվության ազատության իրավունքը, դրա իրացման մեխանիզմները եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի կիրառման պրակտիկան:

2011թ. ՏԱ շաբաթվա շրջանակներում իրականացվեցին հետևյալ միջոցառումները.

- **21 սեպտեմբերի, 2011-** ՀՀ անկախության 20-ամյակին եւ Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հիմնադրման 10-ամյակին նվիրված հանրային քարոզարշավ. այդ օրը ԻԱԿ-ի աշխատակիցները եւ ԵՊՀ ուսանողները հատուկ համազգեստներով շրջեցին Երեւանի փողոցներով եւ մարդկանց բաժանեցին ՏԱ իրավունքին առնչվող տեղեկատվական թերթիկներ, բուկլետներ, փուչիկներ:
- **22 սեպտեմբերի, 2011-** Տեղի ունեցավ տեղեկատվության ազատության ոլորտի վիճակագրական պատկերը ներկայացնող նոր վեբ-նախագծի՝ www.givemeinfo.am, մեկնարկ-շնորհանդեսը: Ինչպես նաեւ ներկայացվեցին «Տեղեկատվության ազատությունը Հայաստանում» լայնածավալ մոնիտորինգի արդյունքները:



- **26 սեպտեմբերի, 2011-** Կոտայքի մարզպետարանում տեղի ունեցավ ԻԱԿ-ի կողմից արդիականացված ՀՀ տասը մարզպետարանների պաշտոնական վեբ կայքերի մեկնարկ-շնորհանդեսը:
- **28 սեպտեմբերի, 2011-** Տեղեկատվության ազատության շաբաթը եզրափակվեց «Ոսկե բանալի, ժանգոտ կողպեք» ՏԱ ամենամյա մրցանակաբաշխությամբ: Այս տարի ավանդական դարձած անվանակարգերից բացի, ԻԱԿ-ի հիմնադրման տասնամյակի կապակցությամբ 10 հատուկ մրցանակներ շնորհվեցին նաեւ անցած տասը տարիներին ՀՀ-ում տեղեկատվության ազատության ոլորտի հաստատմանը եւ զարգացմանն ուղղված լավագույն նախաձեռնությունների հեղինակ մարմիններին եւ կազմակերպություններին:

Նոր վեբ նախագիծ տեղեկատվության ազատության ոլորտում



Միջոցառման բացման խոսքում ԵԱԶԿ Երեւանի գրասենյակի ղեկավարի տեղակալ Կարել Յոֆստրան նշեց. «Տեղեկատվության մատչելիությունը չափազանց կարեւոր է արդյունավետ կառավարման, իշխանություններին հաշվետու պահելու համար: Ունենալով առաջադեմ օրենսդրություն մի շարք ոլորտներում, այդ թվում տեղեկատվության ազատության, Հայաստանը դեռեւս կարիք ունի բարելավելու օրենքի կիրառման պրակտիկան: Այս առումով, ինֆորմացիայի ազատության կենտրոնի կողմից այս ասպարեզում իրականացված հետեւողական աշխատանքը եւ այսօր ներկայացված նոր կայքը մեծապես նպաստում են տեղեկատվության մատչելիությունը հանրության կողմից մշտապես վերահսկողության տակ պահելուն, ինչը շատ ողջունելի է:»

ԱՄՆ ՄԶԳ Ժողովրդավարության եւ կառավարման գրասենյակի ղեկավար Սթիվեն Բրագերն իր ողջույնի խոսքում կարեւորեց նորաստեղծ կայքի դերը կառավարության թափանցիկության ու հաշվետվության, ինչպես նաեւ ժողովրդավարական գործընթացում քաղաքացիների տեղեկացված մասնակցության խթանման գործում: «Կայքը հաստատում է ինչպես հասարակության տեղեկացված լինելու եւ կառավարությունից ինֆորմացիա պահանջելու իրավունքը, այնպես եւ

Սեպտեմբերի 22-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը հանրությանը ներկայացրեց GiveMeInfo.am նոր վեբ նախագիծը եւ «Տեղեկատվության ազատությունը ՀՀ-ում 2011թ.» մոնիտորինգի արդյունքները:

կառավարության պարտականությունը լինել թափանցիկ եւ տեղեկություններ տրամադրել՝ համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի», - ասաց նա:

Նախ ներկայացվեց GiveMeInfo.am նոր վեբ նախագիծը. Կայքն ամփոփում է տեղեկատվության ազատության ոլորտի վիճակագրական պատկերը, որը ձեւավորվում է անմիջապես կայքից ներմուծվող ՏԱ հացումների շնորհիվ: Այսօր կայքում ներմուծված են ԻԱԿ-ի կողմից 2010-2011թթ.-ին ուղարկված հարցումները: Կայքը հրաշալի գործիք է յուրաքանչյուրի համար, որը հնարավորություն է տալիս կայք ներմուծել տեղեկություն ստանալու հարցումը եւ կից փաստաթղթերը՝ այդպիսով անձամբ ձեւավորելով ՏԱ վիճակագրական պատկերը Հայաստանում:

www.givemeinfo.am կայքը նաեւ հնարավորություն է տալիս տեսնել, թե յուրաքանչյուր տեղեկատվություն տնօրինող մարմին ինչպես է պատասխանել իրեն հասցեագրված տեղեկություն ստանալու հարցումներին ցանկացած ժամանակահատվածում: Վեբ նախագծի հիմնադիրներն ու գործարկողներն են՝ Ինֆորմացիայի ազատության կենտրոնը, Հելիքս Կոնսալտինգ ընկերությունը, Ալբերտ Պողոսյանը՝ նախագծի մտահղացման հեղինակ եւ Սամվել Մարտիրոսյանը:

Այնուհետև ներկայացվեցին ԻԱԿ-ի իրականացրած «Տեղեկատվության ազատությունը ՀՀ-ում-2011» մոնիտորինգի արդյունքները: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը գործում է շուրջ 8 տարի: Վերջին տարիներին ՏԱ օրենսդրության կիրառման պրակտիկայում բավականին շատ փոփոխություններ եւ դրական արդյունքներ են գրանցվել, եւ ներկայումս անհրաժեշտություն է առաջացել պարզելու, թե ինչպես են տեղեկատվություն տնօրինողները կատարում Օրենքի պահանջները», - իր ելույթում ասաց ԻԱԿ ղեկավար Շուշան Դոյրոյանը:

«Տեղեկատվության ազատությունը ՀՀ-ում-2011» մոնիտորինգը ԻԱԿ-ին հնարավորություն տվեց պարզել տեղեկատվության ազատության առկա վիճակը Հայաստանում: Մոնիտորինգի շրջանակում 50 մարմնի ուղարկված 250 հարցումների 56 տոկոսին տրվել է լիարժեք պատասխան: Սակայն, մյուս կողմից, մոնիտորինգի արդյունքները վկայում են, որ դեռևս լուրջ խնդիր են մնում անպատասխան մնացած հարցումները, որոնք կազմել են ընդհանուր հարցումների 30 տոկոսը: Սա այն դեպքում, երբ մերժումների ընդհանուր թիվը կազմել է ընդամենը 8-ը, որից միայն մեկն է եղել օրինական: Ստացվում է, որ այն բոլոր դեպքերում, երբ մարմինը չի ցանկացել տրամադրել տեղեկատվություն, նախընտրել է ոչ թե գրավոր մերժել դիմողին, այլ պարզապես անպատասխան թողնել հարցումը:

Խոչընդոտ է շարունակում մնալ նաև հարցումներին ժամանակին պատասխանելու հարցը: 250 հարցումներից 19.2 տոկոսին տրվել է ուշացած պատասխան: Եղել են դեպքեր, երբ տեղեկատվությունը տրամադրվել է 1 ամիս 16 օր ուշացումով:

Մոնիտորինգը եւ GiveMeInfo.am նախագիծը իրականացվել են «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի կողմից «Տեղեկատվության ազատության օրենսդրության կիրառումը Հայաստանում» ծրագրի շրջանակում, ԵԱՀԿ Երեւանի գրասենյակի եւ ԱՄՆ ՄԶԳ համաֆինանսավորմամբ:

ՀՀ 10 մարզպետարանների կայքերի շնորհանդես

Սեպտեմբերի 26-ին Հրազդանում՝ Կոտայքի մարզպետարանում տեղի ունեցավ ՀՀ 10 մարզպետարանների արդիականացված կայքերի շնորհանդեսը: Նոր կայքերը պատրաստվել են «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի կողմից իրականացվող «Տեղեկատվության մատչելիությունը որպես համայնքային մասնակցության միջոց» ծրագրի շրջանակում՝ ԱՄՆ ՄՉԳ ֆինանսական աջակցությամբ:

Շնորհանդեսին ՀՀ Տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ Վաչե Տերտերյանը նշեց. «Ստեղծվել են բավականին մեծ հնարավորություններով տեղեկատվական ռեսուրսներ: Օգտագործելով ժամանակակից տեխնիկական լուծումները՝ հնարավոր է դարձել տվյալ մարզի եւ համայնքների մասին բավականին մեծ ծավալի տեղեկատվություն հասանելի դարձնել հանրությանը: Մենք հուսով ենք, որ կայքերը գործունե կլինեն, կապահովեն հասարակության հետ հետադարձ կապը, քաղաքացիներին հնարավորություն կընձեռեն ծանոթանալ ոչ միայն մարզպետարանների, այլև համայնքների ղեկավարների եւ ավագանու որոշումներին՝ այդպիսով նպաստելով նաեւ տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության թափանցիկությանը»:

«Հայաստանը ձգտում է բարելավել իր էլեկտրոնային կառավարման համակարգերը. պատիվ ունեինք այդ կարեւոր հարցում օժանդակելու մարզպետարանների համար տեղեկատվության ազատության միջազգային չափանիշներին եւ մասնավորապես ՀՀ Տեղեկատվության ազատության մասին օրենքին համապատասխան միանման կայքերի մշակմանը», -նշեց ԱՄՆ ՄՉԳ Հայաստանի տնօրենի պաշտոնակատար Ստիվեն Բրազերը:

Կոտայքի մարզպետ Կավալենկո Շահալոյանը նշեց, որ՝ «Արդիականացված կայքերը, բնականաբար, կնպաստեն մարզպետարանի գործունեության հրապարակայնությանը եւ հանրային իրազեկման աշխատանքների առավել թափանցիկ կազմակերպմանը: Կայքերը լավագույնս կնպաստեն պետական կառավարման համակարգի եւ հանրության առավել արդյունավետ շփումների ապահովմանը»:



«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի նախագահ Շուշան Դոյոյանը կարեւորեց այն փաստը, որ այս արդիականացված ռեսուրսները լայն հնարավորություն են ընձեռում մարզպետարաններին կատարել իրենց պարտավորությունը, որն է՝ «սեփական նախաձեռնությամբ հանրության համար մատչելի դարձնել իրենց տնօրինման տակ գտնվող տեղեկությունները»:

Կայքերում հրապարակված են պարտադիր հրապարակման ենթակա բոլոր տեղեկությունները, որոնք հանրային կարեւորություն ունեն: Կայքում օգտագործողները կարող են ծանոթանալ տեղեկատվության ազատության օրենսդրությանը, ինչպես նաեւ առցանց հետեւել իրենց հարցումներին, նամակ-դիմումներին:

Կայքը մշակել եւ պատրաստել է «Ջելիքս կոնսալտինգ» ընկերությունը:

ՏԱ ամենամյա մրցանակաբաշխություն 2011

2011թ. սեպտեմբերի 28-ին՝ տեղեկատվության ազատության միջազգային օրը տեղի ունեցավ Ինֆորմացիայի ազատության կենտրոնի «Ոսկե բանալի եւ ժանգոտ կողպեք» ամենամյա մրցանակաբաշխությունը, որն ամփոփեց սեպտեմբերի 21-ին մեկնարկած Տեղեկատվության ազատության շաբաթը: Այս տարի միջոցառումը նվիրվում է ԻԱԿ-ի 10 ամյակին:



Մրցանակաբաշխության դրական մրցանակն է Ոսկե բանալին՝ որպես բաց եւ լավ աշխատանքի խորհրդանիշ: 2011թ.-ին Ոսկե բանալի մրցանակ շնորհվեց հետևյալ անձանց եւ կազմակերպություններին.

- ՀՀ Կրթության եւ գիտության նախարարությունը՝ 2011թ. որպես «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը լավագույնս կիրառած պետական կառավարման մարմին,
- ՀՀ Արդարադատության նախարարության պաշտոնական կայքին՝ www.moj.am- ին՝ որպես 2011թ. տեղեկատվության տրամադրման լավագույն ինտերնետային պաշտոնական կայք,
- Կոտայքի մարզպետարանին՝ որպես 2011թ. տեղեկատվության ազատության ապահովմանն ուղղված լավագույն պաշտոնական նախաձեռնություն,
- «Պետական կարիքների գոհեր» ՀԿ-ին՝ որպես 2011թ. տեղեկություն ստանալու իրավունքը

լավագույնս օգտագործած հասարակական կազմակերպություն,

- Արման Ղարիբյանին՝ («Լրագիր» էլեկտրոնային թերթ)՝ որպես 2011թ. տեղեկատվության ազատության հիմնահարցերն ամենակտիվ լուսաբանած լրագրող,
- www.PanArmenian.net լրատվական գործակալությանը՝ որպես 2011թ. Տեղեկատվության ազատության հիմնահարցերն ամենակտիվ լուսաբանած լրատվամիջոց,
- www.hra.am կայքին՝ որպես 2011թ. Տեղեկատվության ազատության հիմնահարցերն ամենակտիվ լուսաբանած լրատվամիջոց:

Ժանգոտ կողպեքներ շնորհվեցին 2011թ. ամենագավեշտալի պաշտոնական պատասխանի հեղինակ մարմիններին՝ ՀՀ ԿԱ պետեկամուտների կոմիտեին եւ «Համալսարանականներ» համատիրությանը:



Ինֆորմացիայի ազատության կենտրոնի 10-ամյակի կապակցությամբ նաեւ 10 հատուկ մրցանակներ շնորհվեցին այն կազմակերպություններին, որոնք այս 10 տարիների ընթացքում նշանակալի ներդրում են ունեցել Հայաստանում տեղեկատվության ազատության զարգացման գործում:

«Տեղեկատվության ազատության ամենամյա մրցանակաբաշխությունը հզորացնում է հասարակական վերահսկողությունը պետական մարմինների վրա, նրանց ստիպում է առավել բաց աշխատել եւ հաշվետու լինել հանրության առջեւ: Շատ մարմինների համար սա լավ խթան է՝ կատարելագործելու իրենց աշխատանքը, վերանայելու թերությունները եւ շտկելու դրանք,-նշեց ԻԱԿ նախագահ Շուշան Դոյրոյանը,-միեւնույն ժամանակ, այս միջոցառումը խրախուսում եւ քաջալերում է քաղաքացիներին, լրագրողներին եւ ՀԿ-ներին դառնալ տեղեկություն ստանալու իրավունքի պաշտպան եւ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի ակտիվ օգտագործող»:

Մրցանակաբաշխության արդյունքները որոշել է ոլորտում գործող 9 հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից բաղկացած անկախ ժյուրիի կազմը:

Հրապարակային եւ փակ գերատեսչությունների ընտրության չափանիշներին կարող եք ծանոթանալ <http://www.foi.am/hy/award-standards/> կայքում:

Մրցանակաբաշխությունը կազմակերպվել է Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կողմից՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ:

Տեղեկատվության ազատությանը նվիրված առաջին երգը

Տեղեկատվության ազատությունն ունի արդեն իր սեփական երգը, որի հեղինակն է VOX խմբի ղեկավար Արամ Ռյանը:

http://www.youtube.com/watch?v=cJWYv_9XVos



Give Me Info

Ես ուզում եմ, որ երբեք ինձ չխաբես,
Որքան էլ դառը՝ միշտ ճշմարտությունն ասես:
Կան խնդիրներ, որոնք պիտի միասին լուծենք:
Թե քողարկես, միասնաբար կկործանվենք:

Պայքարում եմ, պահանջում եմ՝
Give me info -
Տեղեկություն ինձ տու՛ր
Give me info -
Թափանցիկ, մաքուր:

Ես երազել եմ, որ ապրեմ արդար երկրում:
Բայց որտեղ սուտ կա, չի լինում արդարություն:
Ես մարդ եմ բանական, պիտի ազատ լինեմ:
Ինչպես ազատ լինել, տեղեկություն չունեմ:

Պայքարում եմ, պահանջում եմ՝
Give me info -
Տեղեկություն ինձ տու՛ր
Give me info -
Թափանցիկ, մաքուր:
Փրկենք ճշմարտությունը ստի կապանքից:

Տեղեկությունն է լույսը, որ կիշխի նորից:
Տեղեկությունն է ուժն ու զորությունը մեր՝
Միասին կարող ենք կյանքը մեր երկրում փոխել:

Պայքարում եմ, պահանջում եմ՝
Give me info -
Տեղեկություն ինձ տու՛ր
Give me info -
Թափանցիկ, մաքուր:

Մատչելի տեղեկատվություն եւ տեղեկացված հասարակություն

Հուլիսի 19-ին ՀՀ Կոտայքի մարզպետարանում բացվեց տեղեկատվական կենտրոն, որի նախաձեռնողը Կոտայքի մարզպետ Կավալենկո Շահգալոյանն էր: Բացման արարողությանը ներկա էին Կոտայքի մարզպետը, թեմի առաջնորդը, ԻԱԿ նախագահը եւ տարբեր լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

Կոտայքի մարզպետարանում մշտապես կարելուովել ու կարելուովում են հրապարակային գործելաոճի գերակայությունները եւ իրականացվող բոլոր գործընթացները կազմակերպվում են բացառապես այդ մտայնությամբ եւ հանրության համար առավել մատչելի տեղեկատվության ապահովման նպատակադրմամբ:

Տեղեկատվական այս կենտրոնի առկայությունը եւս պետք է համարել տեղեկատվության մատչելիության ապահովման հերթական նախաձեռնություն, որն իր ներկայությամբ կնպաստի ժողովրդավարության կարելուրագույն ուղղություն համարվող տեղեկատվության ազատության առավել կենսունակ միջավայրի ձեւավորմանը:

Վստահություն կա, որ մարզպետարանի տեղեկատվական կենտրոնը կդառնա բոլոր այցելուների, մարզի բնակիչների համար մի կարելուրագույն վայր, որտեղ հնարավոր կլինի ստանալ բազում հարցերի պատասխաններ, տեղեկատվության հարցման օրենսդրական տարբերակներով դիմել պատասխանատուներին, ստանալ սպառիչ պատասխաններ եւ լիարժեքորեն կիրառել տեղեկացված լինելու սահմանադրական իրավունքն ու զգալ այդ իրավունքի ամբողջական ընկալումները:

Կոտայքի մարզպետարանի տեղեկատվական կենտրոնն դառնալու է տնօրինվող տեղեկատվության մատուցման մի յուրօրինակ եւ քաղաքակիրթ տարբերակ, որը սկիզբ է դնելու այս ասպարեզում մարզպետարանի կողմից իրականացվող աշխատանքների նոր փուլի համար, մի փուլ որտեղ ձեւավորվում են հանրային իրազեկման գործառույթների առավել արդյունավետ կազմակերպման, ազատ տեղեկատվության, հրապարակային ու թափանցիկ գործելաոճի բուրրովին նոր ու համակողմանի մոտեցումներ:

Տեղեկատվական կենտրոնի այցելուները կարող են նախ դիմել բանավոր հարցմամբ, ստանալ անհրաժեշտ ուղղորդում փնտրվող տեղեկատվության տնօրինողի եւ պաշտոնական կայքերում այդ տեղեկատվության առկայության վերաբերյալ:

Էլեկտրոնային տարբերակով տեղեկատվությունը չգտնելու դեպքում տեղեկատվական կենտրոնում հնարավոր է փակցված օրինակելի հարցման տարբերակից օգտվելով դիմել գրավոր հարցմամբ, աշխատակցի օժանդակությամբ այդ հարցումը մուտքագրել մարզպետարանի փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային «Mulberry» համակարգ եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետներում ստանալ պահանջվող տեղեկատվությունը:

Կենտրոնի այցելուները կարող են առկա համակարգիչների միջոցով «Mulberry» համակարգ մուտք եղած իրենց դիմումի կամ հարցման ընթացքին ծանոթանալ նախապես իրենց տրված 12 նիշանոց համարի միջոցով:

Հավելենք նաեւ, որ տեղեկատվական կենտրոնում գործելու է բացառապես «Մատչելի տեղեկատվություն եւ տեղեկացված հասարակություն» կարգախոսը, որի ազդակներն անընդհատ նկատելի են լինելու հանրության համար:

Այս կենտրոնում գործելու է նաեւ մարզպետարանի մամուլի սրահը, որտեղ կազմակերպվելու են մամուլի ասուլիսներ, ճեպագրույցներ եւ հարցազրույցներ՝ քննարկելով, վերլուծելով եւ ներկայացնելով հանրության համար առավել կարելուր թեմաներ ու դիտարկումներ:

Ինտերնետով հրապարակային ծանուցումն անվճար է եւ առավել արդյունավետ

ՀՀ Կառավարության աշխատակազմի ղեկավար Դավիթ Սարգսյանի գնահատմամբ՝ տեղեկատվության ազատությունը կենսական անհրաժեշտություն է ցանկացած ժողովրդավար հասարակության համար: Այս առումով ստեղծված կայքը՝ www.azdarar.am, նոր քայլ է առավել օպերատիվ եւ համակարգված ներկայացնելու պաշտոնական տեղեկությունները:

2007թ.-ին ընդունված «Ինտերնետով հրապարակային ծանուցման մասին» օրենքը նախատեսում էր, որ օրենսդրությամբ սահմանված բոլոր ծանուցումները ոչ միայն պետք է տպագրվեն թերթերում եւ տարածվեն հեռուստատեսությամբ, այլեւ ստեղծվեր հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայք: Տեխնիկական պատճառներով, այդ թվում նաեւ էլեկտրոնային կառավարման համակարգի ոչ լրիվ ներդրման պատճառով, այն ժամանակ օրենքն իրականացնել չհաջողվեց: Արդյունքում, օրենքը երկար ժամանակ մնացել էր թղթի վրա:

Եվ միայն 2011թ.-ի փետրվարի 17-ին օրենքի պահանջի իրականացման նպատակով ՀՀ Կառավարությունն ընդունեց «Ինտերնետով հրապարակային ծանուցման ենթակա հայտարարության ընդունման, կայքը վարող անձին փոխանցման, կայքում հայտարարությունների տեղադրման եւ արխիվացման ժամկետների սահմանման կարգը եւ հայտարարության տեքստը ներկայացնելու էլեկտրոնային ձեւաչափը հաստատելու մասին» N174-Ն որոշումը: Արդեն ապրիլի 1-ից մեկնարկեց հրապարակային ծանուցումների համար www.azdarar.am կայքը:

«Կարող եմ ասել, որ ստեղծվել է տեխնիկապես իրոք լավ աշխատող կայք, հիմա խնդիրը միայն այն է, որ այն իսկապես իր նպատակին ծառայի, որ ամենօրյա թարմացումներով տեղ գտնեն բոլոր պաշտոնական ծանուցումները, իսկ լրագրողների, հասարակական կազմակերպությունների ու այլ քաղաքացիների խնդիրը կլինի հսկել օրենքի կատարման ընթացքը, - նշում է Ինֆորմացիայի ազատության կենտրոնի ղեկավար Շուշան Դոյոյանը: - «Շատ կարելու է նաեւ, որ

աղբյուրը մեկը կդառնա ու մրցութային, աճուրդային հայտարարությունները եւ նմանատիպ փաստաթղթերը հայտնվեն այս կայքում: Կարելու է նաեւ, որ յուրաքանչյուր քաղաքացի կամ իրավաբանական անձ, ով ունի էլեկտրոնային ստորագրություն, իր հայտարարությունները տպելու համար ոչ թե թերթերին կղիմի ու գումար կծախսի, այլ անվճար կհրապարակի այստեղ»:

www.azdarar.am կայքում դուք կարող եք գտնել, օրինակ, հիմնադրամների, բաց բաժնետիրական ընկերությունների, հասարակական կազմակերպությունների հաշվետվությունները: Կամ ասենք ընկերությունների լուծարման մասին հայտարարությունն ու պատճառները եւ ոչ միայն: Կայքում հնարավոր է գտնել նաեւ ընտրությունների արդյունքների, ընտրական հանձնաժողովների կայացրած վերահաշվարկային հայտարարությունների, պետական գնումների ընթացակարգի մասին տեղեկություններ:

«Պատկերացրեք, որ ինչ-որ դատական վեճ կա, եւ մի կողմը մյուս կողմին պետք է պատշաճ ծանուցի այդ վեճի մասին: Սակայն երկրորդ կողմը չկա՝ փախուստի մեջ է կամ տանը չի, իսկ այդպիսի դեպքեր շատ են լինում»-, մանրամասնում է Դավիթ Սարգսյանը: - «Այդ ժամանակ, այդ հայտարարության տեքստը տեղադրում եք azdarar.am կայքում, եւ օրենքի ուժով այն կհամարվի պատշաճ ծանուցում»:

Կայքի «Գլխավոր» եւ «Մեր մասին» բաժիններում դուք կկարողանք ստանալ կայքի գործունեության, դիմելու ձեւի եւ վերջին թարմացումների մասին տեղեկատվություն: Հայտարարություններ բաժնում կարող եք ըստ հայտատուների եւ տիպերի ծանոթանալ պաշտոնական ծանու-

Հարգելի այցելու

Քարի գալուստ Հայաստանի Հանրապետության ինտերնետային ծանուցումների պաշտոնական կայք, որը ստեղծվել և գործում է «Ինտերնետով հրապարակային ծանուցման մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան: Այս կայքում Ղուբ կարող եք տեղադրել պաշտոնական անվճար ծանուցում՝ օրենքով կամ նորմատիվ իրավական այլ ակտով սահմանված այն դեպքերում, երբ նախատեսվում է հրապարակային ծանուցում՝ տեղեկատվությունը մամուլում հրապարակելու միջոցով: Այստեղ Ղուբ նաև կարող եք գրանցվել որպես բաժանորդ և էլեկտրոնային փոստով ստանալ կայքում տեղադրվելիք Ձեզ հետաքրքրող հայտարարություններն ու ծանուցումները: Կայքի աշխատանքի բարելավմանն ուղղված Ձեր նկատառումներն ու առաջարկությունները, տեսակետներն ու մեկնաբանությունները Ղուբ կարող եք ներկայացնել ուղարկելով նամակ moderator@azdarar.am էլեկտրոնային փոստի հասցեով :

Ինչպես դիմել

Հրապարակային ծանուցում հրապարակող անձը կայքից [ներքեցնում է ձևը](#), լրացնում է այն և էլեկտրոնային կրիչով ներկայացնում ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն:

Էլեկտրոնային ստորագրության առկայության դեպքում հրապարակային ծանուցում հրապարակող անձը լրացնում է պահանջվող տվյալները կայքի [էլեկտրոնային դիմում](#) բաժնում:

ցումներին, հաշվետվություններին, թափուր աշխատատեղերի մասին հայտարարություններին եւ այլն:

«Տեղադրման ենթակա են այն հայտարարությունները, որոնք որեւէ օրենքի համաձայն պետք է հրապարակվեն մամուլում: Օրինակ, «Չուումներ մասին» օրենքը նախատեսում է, որ մինչեւ 2013 թվականը գնման մասին տեղեկատվությունը պետք է հրապարակվի մամուլում: Հետեւաբար, այդ նույն տեղեկատվությունը պետք է համապատասխանաբար հրապարակվի azdarar.am կայքում: Սակայն եթե ես ցանկանում եմ վաճառել իմ տունը եւ ուզում եմ հրապարակել այդ մասին, բայց դա որեւէ օրենքի պահանջ է, հետեւաբար այդ հայտարարությունը, դեռեւս գործող կարգով, չպիտի հրապարակվի էլեկտրոնային կայքում: Այսինքն հրապարակվում են այն հայտարարությունները, որոնք նախատեսված են օրենսդրությամբ»,- պարզաբանում է ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Արամ Օրբեյանը:

Հայտարարություն տեղադրելու համար նախապես կայքից կարող եք տպել դիմումի ձեւը, լրացնել այն, այնուհետ հայտարարության տեքստն էլ ձեզ հետ գնալ Արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն՝

ք. Երեւան, Կոմիտասի 49/3 հասցեով, իսկ մարզերի բնակիչները կարող են այցելել պետութեգիստրի մարզային կենտրոններ: Իսկ եթե ունեք էլեկտրոնային ստորագրություն, ապա յուրաքանչյուր հայտարարություն հնարավոր է անձամբ տեղադրել կայքում:

«Ստորաբաժանումներն ընդունում են հայտարարությունները եւ փոխանցում համապատասխան բաժին: Այստեղ նախ ստուգվում է հայտարարությունը, որ չլինեն ակնհայտ կեղծիքներ, այնուհետեւ կայքում ճիշտ տեղը տեղադրել, հրապարակելն է. որ գնման մասին հայտարարությունը չգնա ՀԿ-ների հաշվետվությունների շարք: Ինչը երկու նպատակ է հետապնդում: Առաջինը, որպեսզի ամեն դեպքում փնտրելիս մարդիկ հեշտությամբ կարողանան գտնել եւ երկորդ՝ բաժանորդագրության միջոցով ուղարկվի ճիշտ հայտարարություն»,- պարզաբանում է Արամ Օրբեյանը:

Համաձայն Կառավարության որոշման՝ կայքը վարողը պարտավոր է 2 աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան հայտարարությունը գետեղել կայքում: Եթե մամուլում այդ նույն հայտարարությունը հրապարակվում է միայն մեկ օր եւ մեկ թերթում, եւ հնարավոր է նաեւ, որ դուք պարզապես չհասցնեք գնել թերթը, ապա azdarar.am-ում դրանք տեղադրված են մշ-

տապես, եւ որոնման համակարգի միջոցով կարող եք ցանկացած օր եւ ցանկացած ժամի գտնել ձեզ հետաքրքրող հայտարարությունը: Որպեսզի հեշտությամբ եւ արագ գտնեք, կարող եք փնտրել ըստ հուշող բառերի եւ հրապարակման ժամանակաշրջանի, ինչպես նաեւ՝ հայտատուների եւ հայտարարության տիպերի միջոցով:

Կայքի թարմացումներին բաժանորդագրվելու համար անհրաժեշտ է համապատասխան դաշտում լրացնել ձեր էլեկտրոնային փոստի հասցեն, նշել առնվազն մեկ հայտատու կամ հայտարարության տիպ եւ սեղմել «Բաժանորդագրվել» կոճակը: Որպես այլընտրանքային տարբերակ, կարող եք օգտվել նաեւ կայքի RSS հոսքից: Այսպես դուք պարբերաբար ձեր էլեկտրոնային փոստին կստանաք ձեզ առավել հետաքրքրող եւ անհրաժեշտ տեղեկությունները:

«Օրինակ եթե պատրաստվում եք մասնակցել գնումների գործընթացին, բաժանորդագրվում եք այդ բաժնին եւ ամեն անգամ, երբ նոր հայտարարություն է տեղադրվում այդ բաժնում, ձեր էլեկտրոնային փոստին ստանում եք նամակ-ծանուցում այդ մասին: Կամ ենթադրենք կատարում եք հասարակական կազմակերպությունների մոնիթորինգ, ձեզ հետաքրքիր են ՀԿ-ների հաշվետվությունները: Սա հնարավորություն է տալիս առանց ամեն օր, անընդհատ այցելելու կայք տեղեկացված լինել ձեզ հետաքրքրող բաժնում նորությունների ավելացմանը, նոր հայտարարությունների առկայությանը կամ փոփոխությանը», - նշում է Արդարադատության նախարարի տեղակալ Արամ Օրբելյանը:

Այժմ, ի տարբերություն մամուլում հրապարակելուն, այս կայքում հայտարարությունների տեղադրումն անվճար է, սակայն եթե անգամ նախատեսվի որոշակի վճարում, ապա, ինչպես նախարարությունից են հավաստիացնում, այդ գումարը չի գերազանցելու տպագիր մամուլում առկա վճարի չափը:

«Անընդհատ հետազոտություններ ենք անելու պարզելու կայքում գործող մեխանիզմները, որքան են մարդկանց համար օգտագործելի եւ հասանելի: Որովհետեւ հնարավոր է կայքը շատ հագեցված եւ լավը լինի, սակայն մարդիկ չկարողանան օգտվել: Մեր նպատակն է ունենալ հնարավորինս պարզ, բայց առաջատար կայք», -

հավելում է Արամ Օրբելյանը:

Կայքը պատրաստվել է շահագործվել է «Յելիքս կոնսալտինգ» ընկերության կողմից: Ինչպես ընկերության ղեկավար Արամ Մխիթարյանն է նշում՝ կայքը նախագծելիս հաշվի են առնվել միջազգային չափանիշները. «Մենք կարելու է ենք, որ քաղաքացին մտնելով կայք՝ բացարձակապես չդժվարանա կողմնորոշվելու, թե որտեղից ինչ կարող է գտնել: Եվ տառաչափերն ենք հաշվի առել եւ ենթաբաժինները: Աշխարհում ընդունված չափանիշ կա, երբ մի քանի քայլից ավել ես գնում համակարգի մկնիկով եւ դեռ չես գտել քեզ անհրաժեշտ բաժինը, նշանակում է կայքը սխալ է կազմված»:

Կայքի աշխատանքի բարելավմանն ուղղված ձեր նկատառումներն ու առաջարկությունները, տեսակետներն ու մեկնաբանությունները կարող եք ուղարկել moderator@azdarar.am էլեկտրոնային փոստի հասցեով եւ կամ զանգել թեժ գծի հեռախոսահամարին՝ 010 20 17 25:

Գիտակցելով տեղեկատվության ազատությունն ու օրենքի մեկ այլ՝ ոչ պակաս կարելու պահանջը՝ տեղեկատվության հրապարակումը հնարավորինս մատչելի եղանակով իրականացնելը, այսօր, կառավարության աշխատակազմի ղեկավար Դավիթ Սարգսյանի կարծիքով, լավագույն տարբերակն ինտերնետն է. «2 տարի առաջ Հայաստանում կտրուկ ավելացավ ինտերնետից օգտվողների թիվը: Մեր ուսումնասիրությամբ պաշտոնական կայքեր այցելում է տարեկան մոտ 200 000 մարդ: Կարելու է, որ մենք հասնենք արդյունքի եւ ոչ թե սպասենք, որ քաղաքացին մեզնից դա պահանջի, այլ միշտ մեկ քայլ առաջ լինենք», - ամփոփում է Դավիթ Սարգսյանը:

Դիանա Կարապետյան

Յուրաքանչյուր քաղաքացի լրագրող է

Սեփական փորձով համոզվեցի, թե քաղաքացին ինչ դժվարությունների է բախվում եւ անբարեհաճ վերաբերմունքի արժանանում տեղեկատվություն ստանալու ճանապարհին: Դիմեցի մասնագիտության օգնությանը՝ սակայն մնալով քաղաքացի:



Յուլիսի սկզբին որպես «Արժանապատիվ տրանսպորտ» քաղաքացիական նախաձեռնության ներկայացուցիչ գրավոր հարցում էի մուտք արել Երեւանի քաղաքապետարան: Մի քանի օր անց ինձ զանգահարեցին Տրանսպորտի վարչությունից եւ ասացին, որ իմ պահանջած տեղեկատվությունը մեծ ծավալի է, եւ ինչպես օրենքն է նախատեսում, ես պետք է վճարեմ փաստաթղթերի պատճենահանման գումարը: Հայտնեցի, որ պատրաստ եմ կատարել օրենքի պահանջը: Քաղաքապետարանն իմ դիմումը մակագրել էր «Երեւանտրանս» ՓԲԸ-ին, ինձ էլ տեղեկացրել էին, որ պետք է այնտեղ վճարում կատարեմ եւ ստանամ իմ փնտրած տեղեկատվությունը, այն է՝ Երեւանը սպասարկող երթուղային տաքսիների չվացուցակները, որը հնարավորություն կտա պարզել, թե հանրությանը սպասարկող տրանսպորտը որքանով է հետեւում սահմանված ժամանակացույցին:

Երեք օր անց այցելեցի «Երեւանտրանս» ՓԲԸ: Դիմումս տեղ էր հասել, սակայն մնացել էր գրանցամատյանում, քանի որ պատասխանատու պաշտոնյան այն չէր էլ վերցրել: Իմ ներկայությամբ ոմն Դադասյան, ով չներկայացավ, թե ինքն ով է, կարդած դիմումս, ապա ասաց, թե իրենք չեն պատասխանելու դիմումին: Ինձ էլ խորհուրդ տվեց զանգահարել քաղաքապետարան եւ նրանցից պահանջել տեղեկատվությունը, քանի որ դիմումս այնտեղ եմ մուտքագրել:

Չանգահարեցի քաղաքապետարան, ասացին, թե ինձ գրավոր պատասխան են ուղարկել փոստով, իսկ երբ պարզեցին, որ ես չեմ ստացել, ասացին, որ մոտենամ «Մեկ պատուհան» կոչվող բաժնին եւ այնտեղից ստանամ: Տրանսպորտի վարչության պետի ստորագրությամբ գրավոր պատասխանի բովանդակությունը նույնն էր, ինչ ինձ հեռախոսով էին ասել. «Դուք կարող եք դիմել «Երեւանտրանս» ՓԲ ընկերությանը՝ 30-օրյա ժամկետում ստանալու պահանջվող տեղեկատվությունը»:

Չանգահարեցի Տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչության պետին, որպեսզի նրանից պարզեմ, թե նման իրավիճակում ես ումից կարող եմ տեղեկատվություն ստանալ: Ներկայացա որպես քաղաքացի Արման Դարիբյան: Վարչության պետ Արթուր Գեորգյանը հենց սկզբից ոչ բարեհամբույր էր խոսում ինձ հետ: Նրա հետ մի քանի րոպե վիճելուց հետո ի վերջո լսեցի պատշաճ տոնով պատասխանը. քաղաքապետարանի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչությունը կապ չունի «Մեկ պատուհան»-ում մուտքագրված դիմումների հետ:

Նյութ գրեցի այս ամբողջ պատմության մասին, բայց հրապարակեցի ոչ թե ՉԼՄ-ներում, այլ Ֆեյսբուք սոցիալական ցանցի իմ անձնական էջում: Այն մեծ քննարկումների առիթ դարձավ, իսկ մեկ օր անց իմացա, որ ինձ հետ ցանկանում

Է խոսել Երեւանի քաղաքապետի մամուլի խոսնակ Շուշան Սարգսյանը:

Վերջինս տեղյակ լինելով, որ ես լրագրող եմ, խնդրին ծանոթանալուց հետո խոստացավ, որ կփորձի օգնել: Իսկ ընդամենը մեկ օր անց ինձ զանգահարեցին «Երեւանտրանս» ՓԲԸ-ից եւ հայտնեցին, որ իմ փնտրած տեղեկատվությունը պատրաստ է, կարող եմ գնալ վերցնել: Ի զարմանս ինձ, այդ նույն Դադասյանը բավականին բարեհամբույր էր դարձել իմ նկատմամբ: Տարօրինակ էր, բայց ինձնից պատճենահանման գումարն անգամ չվերցրեցին, թեեւ թե գրավոր հարցման մեջ, թե բանավոր զրույցի ժամանակ շեշտել էի, որ պատրաստ եմ կատարել «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի այդ պահանջը, քանի որ փնտրած տեղեկատվությունը 10 էջից շատ ավելի էր:

Ցավալի է, բայց փաստ, հայաստանյան պաշտոնյանները դեռեւս չեն կարողանում գիտակցել, որ քաղաքացին տեղեկատվություն ստանալու եւ տարածելու նույն իրավունքն ունի, ինչ լրագրողը: Նրանք լրագրողներին էլ մեծ սիրով չեն տրամադրում տեղեկատվությունը, պարզապես լրագրողները «զենք» ունեն նրանց դեմ՝ հրապարակայնությունը:

Բայց տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ներկայիս փուլում յուրաքանչյուր քաղաքացի որոշակի առումով լրագրող է, քանի որ կարող է իր խոսքը հրապարակային դարձնել սոցիալական ցանցերի միջոցով կամ որեւէ ՉԼՍ նամակ ուղարկելու միջոցով: Այնպես որ պաշտոնյաները վաղ թե ուշ պետք է հաշտվեն այս իրողության հետ եւ ապահովեն քաղաքացիների՝ ՀՀ Սամանադրությամբ նախատեսված տեղեկատվություն ստանալու իրավունքը:

Արման Ղարիբյան
Քաղաքացի-լրագրող

Գրենական պարագաների գնումները Նախարարություններում 2009-2011թթ..

2010թ.-ի նոյեմբերի 27-ին եւ 2011թ.-ի մայիսի 25-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը տեղեկատվություն ստանալու հարցումներ ուղարկեց ՀՀ բոլոր նախարարություններին՝ խնդրելով հայտնել, թե որքա՞ն գումար է նախատեսվել 2010թ. եւ 2011թ. պետական բյուջեներով տվյալ նախարարության կարիքների համար գրենական պարագաների ձեռքբերման համար, որքա՞ն գումար է ծախսվել գրենական պարագաների ձեռքբերման համար 2009թ. եւ 2010թ.-ին: Նախարարությունների պատասխան գրությունների վերլուծությունը հնարավորություն տվեց պարզել, թե պետական կառավարման համակարգում էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության Մալբերի համակարգը ներդնելու շնորհիվ նախարարություններում նվազե՞լ են գրենական պարագաների համար ծախսվող գումարները եւ եթե այո, ապա որքանո՞վ են նվազել, թե Մալբերին այդ առումով գրենական ծախսերի ծավալների վրա որեւէ ազդեցություն չի ունեցել:

Նախարարություններից ստացված տեղեկությունների համեմատական վերլուծությանն անցնելուց առաջ նախ վերլուծենք 2011թ. մայիսին ուղարկված 18 հարցումներով խնդրված տեղեկությունների տրամադրման պայմանները՝ ինչպես են նախարարություններն այս անգամ կիրառել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը, ինչ ժամկետներում են տրամադրել տեղեկությունները:

ԻԱԿ-ը հարցում ուղարկել է բոլոր 18 նախարարություններին, ի դեպ, որքան հարցում անպատասխան չի մնացել: Հիշեցնենք, որ ԻԱԿ-ի՝ 2010թ.-ի նոյեմբերի 27-ի հարցումներին չէին պատասխանել միայն ՀՀ առողջապահության եւ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունները: Սակայն, ՀՀ առողջապահության նախարարությունն, այնուամենայնիվ, 16.05.2011թ.-ին՝ ավելի քան 5 ամիս ուշացումով, գրավոր պատասխանել էր Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հարցմանը՝ տրամադրելով խնդրված տեղեկությունները, ինչպես նաեւ նշելով, որ պատասխանի ուշացման համար պատասխանատու աշխատակիցը ենթարկվել է կարգապահական տույժի: Նշենք նաեւ, որ ի տարբերություն նախորդ հարցումների՝ ԻԱԿ-ի նոր՝ 2011թ.-ի մայիսի 25-ին ուղարկված հարցմանը ՀՀ առողջապահության նախարարությունը լիարժեք պատասխան է տվել մայիսի 30-ին՝ հարցումն ուղարկելուց 5 օր անց: Այսինքն, եթե հաշվի առնենք հարցումը նախարարություն հասնելու հա-

մար անհրաժեշտ փոստային առաքման ժամկետը եւ հանգստյան օրերը, ապա նախարարությունը ԻԱԿ-ի հարցմանը պատասխանել է 1-3 աշխատանքային օրվա ընթացքում: Այսինչ, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը նախորդ հարցման նման անպատասխան էր թողել նաեւ ԻԱԿ-ի 25.05.2011թ.-ի հարցումը: 24.06.2011թ.-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը նույնաբովանդակ կրկնակի հարցումով երկրորդ անգամ դիմեց ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը: Վեց օր անց՝ հունիսի 30-ին, ԻԱԿ-ը նախարարությունից ստացավ լիարժեք գրավոր պատասխան:

Պատասխան գրությունների բովանդակությունը, գրավոր մերժում, հղում.

Ուղարկված 18 հարցումներից 1-ի դեպքում տեղեկատվության տրամադրումը մերժվել է, 1-ի դեպքում էլ հղում է արվել էլեկտրոնային կայքին, ինչը, մեր կարծիքով, պատշաճ հղում չէր: Մնացած 16 դեպքում ստացվել է լիարժեք պատասխան: ՀՀ պաշտպանության նախարարությունը գրավոր մերժել է տրամադրել խնդրված տեղեկությունները, իսկ ՀՀ բնապահպանության նախարարությունը հղում է արել էլեկտրոնային կայքին: Մնացած 16 նախարարությունները պատասխան գրություններով տրամադրել են ԻԱԿ-ի խնդրած տեղեկությունները:

Մինչև նախարարությունների պատասխանների բովանդակությունը ներկայացնելը նախ անդրադառնանք տրամադրված մերժմանը եւ հղումին: ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի պատասխան Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հարցման, հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարությունը նախաձեռնել է պետական եւ ծառայողական գաղտնիք պարունակող գնումների գաղտնագերծման գործընթաց: Սակայն այդ աշխատանքները դեռեւս չեն ավարտվել, ինչը պայմանավորված է ՀՀ ՉՈՒ կարիքների համար իրականացվող գնումների վերաբերյալ տեղեկությունների ահռելի ծավալով, ինչպես նաեւ պետական եւ ծառայողական գաղտնիքի արտահոսքը բացառելու համար տեղեկության յուրաքանչյուր կատեգորիա մանրամասն վերլուծության ենթարկելու անհրաժեշտությամբ, ինչը ենթադրում է երկարաժամկետ եւ ծավալուն աշխատանք: Ուստի, ԻԱԿ-ի խնդրած տեղեկությունները շարունակում են համարվել պետական եւ ծառայողական գաղտնիք: Միաժամանակ, պատասխան գրությունում նշված է, որ առաջիկայում ակնկալվում է ավարտել նշված աշխատանքները, որից հետո ՀՀ պաշտպանության նախարարության համար իրականացվող գնումները կկազմակերպվեն առավել թափանցիկ պայմաններով:

Ինչպես նշվեց, ՀՀ բնապահպանության նախարարությունը ԻԱԿ-ի հարցմանը պատասխանել է հղումով: Հատկանշական է, որ հղումն արված է ոչ թե ՀՀ բնապահպանության նախարարության, այլ ՀՀ կառավարության www.e-gov.am եւ ՀՀ ֆինանսների նախարարության www.minfin.am կայքերին: Նշենք, որ Ինֆորմացիայի ազատության կենտրոնը www.e-gov.am կայքի «Ինտերակտիվ բյուջե» բաժնում, որին հղում էր արել նախարարությունը, չգտավ 2009թ.-ի բյուջեով տվյալ նախարարության կարիքների համար գրասենյակային նյութերի ձեռքբերման համար բյուջեով հատկացված եւ ծախսված միջոցների մասին տեղեկատվություն: Ամեն դեպքում, ՀՀ ֆինանսների նախարարության կայքում պահաջվող տեղեկատվությունն առկա էր: Նշենք, սակայն, որ ՀՀ բնապահպանության նախարարության հղումը թեւ արդյունքում բովանդակային առումով պատշաճ էր, քանի որ նախարարության նշած կայքում առկա էր խնդրվող տեղեկատվությունը, սակայն ձեւի առումով

պատշաճ չէր, քանի որ նախարարության պատասխանում ապահովված չէր տեղեկատվության մատչելիության սկզբունքը. նախարարությունը չէր նշել, թե www.minfin.am կայքի «Պետական բյուջե» բաժնի կոնկրետ որ մասում (Էլեկտրոնային փաստաթղթում) է առկա անհրաժեշտ տեղեկությունը, որը գտնելը ԻԱԿ-ից բավական ժամանակ պահանջեց, քանի որ ՀՀ ֆինանսների նախարարության կայքում «Պետական բյուջեի մասին» 2009 եւ 2011թ.թ. ՀՀ օրենքների հավելվածներից յուրաքանչյուրը, որոնցում առկա էր անհրաժեշտ տեղեկությունը, կազմված էր 25-ից ավելի առանձին էլեկտրոնային փաստաթղթերից: Հետեւաբար, ՀՀ Բնապահպանության նախարարության հղումը պատշաճ համարվել չի կարող:

Գրեւական պարագաների ձեռքբերման համար ՀՀ նախարարությունների 2009, 2010, 2011թ.թ.-ի բյուջեով նախատեսված եւ 2009, 2010թ.թ.-ին ծախսված գումարների համեմատական վերլուծություն.

2010թ.-ից ՀՀ բոլոր նախարարություններում գործում է Մալբերի էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգը: Այս համակարգի նպատակներից մեկն է նաեւ կրճատել փաստաթղթաշրջանառության համար անհրաժեշտ գրեւական պիտույքների վրա ծախսվող գումարների ծավալը: Տեսնենք, թե որքանով է արդարացրել իրեն այս ծրագիրը եւ արդյոք փոխվել են գրեւական պարագաների (թուղթ, գրիչ, ծրար, թղթապանակ եւ այլն) ձեռքբերման համար հատկացվող եւ ծախսվող գումարները Մալբերի համակարգի ներդրումից հետո (2010-2011թ.թ.):

Համեմատության համար նախարարություններին բաժանենք 4 խմբի, որոնցում կներկայացվի 2009, 2010 եւ 2011թ.թ.-ի ընթացքում գրեւական պարագաների ձեռքբերման համար բյուջեով հատկացված գումարների համեմատությունը, քանի որ ծախսերը կաշկանդված են հատկացված գումարի չափով: Համեմատության մեջ հաշվված չեն ԻԱԿ-ի հարցումները մերժած, հղում արած, ոչ լիարժեք պատասխանած կամ հարցումն անպատասխան թողած նախարարությունները:

- 1 2009թ.-ի համեմատ 2010 եւ/կամ 2011թ.թ.-ին գրեական պարագաների ձեռքբերման համար նախատեսվել է ավելի շատ գումար - ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարություն:
- 2 2009թ.-ի համեմատ 2010 եւ/կամ 2011թ.թ.-ին գրեական պարագաների ձեռքբերման համար նախատեսված գումարը մնացել է գրեթե նույնը (այսինքն, եթե տարբերությունը չի գերազանցում 500.000 դրամը) - ՀՀ արտաքին գործերի նախարարություն:
- 3 2009թ.-ի համեմատ 2010 եւ/կամ 2011թ.թ.-ին գրեական պարագաների ձեռքբերման համար նախատեսվել է ավելի քիչ գումար - ՀՀ տարածքային կառավարման, ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի, ՀՀ արդարադատության, ՀՀ էկոնոմիկայի, ՀՀ կրթության եւ գիտության, ՀՀ մշակույթի, ՀՀ սպորտի եւ երիտասարդության հարցերի, ՀՀ տրանսպորտի եւ կապի, ՀՀ քաղաքաշինության նախարարություններ:
- 4 Այս խմբում ներկայացված են նախորդ 3 խմբերից որեւէ մեկին չպատկանող նախարարությունները - ՀՀ գյուղատնտեսության նախարարություն (2009թ.-ի համեմատ 2010թ.-ին նախատեսված գումարն աճել է, իսկ 2011թ.-ին նախատեսվածը՝ նվազել), ՀՀ սիլոնների նախարարություն (2009թ.-ի համեմատ 2010թ.-ին նախատեսված գումարը

նվազել է, իսկ 2011թ.-ին նախատեսվածը՝ մնացել նույնը), ՀՀ ֆինանսների նախարարություն (2009թ.-ի համեմատ 2010թ.-ին նախատեսված գումարը աճել է, իսկ 2011թ.-ին նախատեսվածը՝ նվազել):

Այսպիսով, վերլուծված 15 նախարարություններից 9-ի դեպքում է միայն, որ Մալբերի համակարգի ներդրումից հետո գրեական պարագաների համար հատկացվող գումարները նվազել են, 1 դեպքում՝ ՀՀ արտաքին գործերի նախարարության դեպքում այդ գումարի չափը մնացել է նույնը, 1 դեպքում՝ մի տարի նվազել են, մյուս տարի՝ մնացել նույնը, 2 դեպքում՝ մի տարի նվազել են, մյուս տարի՝ աճել, 2 դեպքում Մալբերիի ներդրումից հետո էլ գրեական պարագաների համար հատկացվող գումարները աճել են: Եթե այս ցուցանիշներն արտահայտենք տոկոսային հարաբերակցությամբ, ապա Մալբերիի շնորհիվ գրեական պարագաների ձեռքբերման ծախսերը կրճատվել են միայն 60%, իսկ 40% կամ աճել են, կամ մնացել նույնը:

Նախարարությունների պատասխանները ներկայացված են ստորել բերված աղյուսակում: Այն ներառում է նաեւ նախորդ հարցման պատասխանների արդյունքները:

Նշենք, որ ՀՀ ֆինանսների նախարարության պատասխանը բովանդակության առումով առանձնանում էր մյուսներից. նախարարությունը նախատեսված եւ ծախսված գումարները ներկայացրել էր ոչ թե մեկ ամբողջ թվով, այլ

Անվանումը	2009թ. բյուջեով նախատեսված /հազար դրամ/	2009թ. փաստացի ծախս /հազար դրամ/	2011թ. բյուջեով նախատեսված /հազար դրամ/
Թուղթ (A4, A3, ԱՅՊՈՒ)	20813.0	15549.9	11760.0
Գրիչ	110.0	109.5	182.0
Ծրար	2788.5	2313.1	2454.0
Թղթապանակ (արագակար, թղթապանակ, ֆայլ, թղթապանակ ՖՆ անվանումով)	1074.0	909.0	1214.0
Թղթապանակ (ռեգիստատոր)			

ավելի մանրամասն՝ աղյուսակի տեսքով: Հարկ է նշել, որ ԻԱԿ-ի նախորդ հարցմանն ի պատասխան ՀՀ ֆինանսերի նախարարությունը 2010 թ.-ին գրեական պարագաների ձեռքբերման համար նախատեսված եւ ծախսված գումարները ներկայացրել էր մեկ ամբողջ թվով, որը ամենաշատն էր բոլոր նախարարությունների համեմատությամբ՝ 47.329.900 դրամ նախատեսված եւ 29.688.800 դրամ ծախսված գումար: Արդյունքում, ԻԱԿ-ի վերլուծության հրապարակումից հետո ՉԼՍ-ների հրապարակումներում ՀՀ ֆինանսների նախարարությանը հատկացված գումարի մեծությունը մնացել էր չմեկնաբանված, ինչը կարող էր հասարակության մոտ երկիմաստ, ոչ դրական տպավորություն թողնել: Այս անգամ, նախարարությունը ոչ միայն ներկայացրել է առավելագույնս լիարժեք պատասխան, այլ նաեւ պարզաբանելով նախատեսված գումարների ծախսերը՝ բացառել է որեւէ կամայական կամ երկիմաստ մեկնաբանություն:

Ժամկետները.

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ կետը սահմանում է, որ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան պետք է տրվի այն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում: ԻԱԿ-ը հարցումներն ուղարկել է փոստով՝ 2011թ.-ի մայիսի 25-ին՝ չորեքշաբթի օրը: Ուստի, ժամկետների մասին ճիշտ պատկերացում կազմելու համար պետք է նկատի ունենալ նաեւ փոստային առաքման համար պահանջվող 1-2 օրը, ինչպես նաեւ հանգստյան օրերը: Ամեն դեպքում, անճշտություններից խուսափելու համար ժամկետները հաշվարկելիս որպես հիմք ընդունվել են հարցումներն ուղարկելու օրը եւ պատասխան գրության ծրարի վրա փոստային ծառայության կնիքի վրա նշված՝ պատասխան գրությունն ուղարկելու օրը:

Ժամկետները վերլուծելիս ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության դեպքում հաշվարկվել է ԻԱԿ-ի կրկնակի հարցմանն ի պատասխան նախարարության ուղարկած պատասխանի ժամկետը: Սակայն պետք է նկատի ունենալ, որ նախարարությունը պատասխանել է կրկնակի հարցմանը, որն ուղարկվել է 2011թ.-ի հունիսի 24-ին՝ առաջին հարցումն ուղարկելուց մեկ ամիս անց. այսինքն ԱԻ նախարարությունը

ԻԱԿ-ի՝ 25.05.2011թ.-ի հարցմանը շուրջ մեկ ամիս չի պատասխանել:

Ժամկետների առումով այս անգամ լավագույնը ՀՀ առողջապահության նախարարությունն է. նախարարությունը ԻԱԿ-ի հարցմանը պատասխանել է 5-օրյա ժամկետում: Ամենավատը ՀՀ գյուղատնտեսության նախարարության արդյունքն է, որը ԻԱԿ-ին պատասխանել է հարցումն ուղարկելուց 26 օր հետո:

ԻԱԿ-ի հարցմանը լիարժեք, սակայն ուշ է պատասխանել նաեւ ՀՀ պաշտպանության նախարարությունը. եթե 27.11.2010թ.-ի՝ ԻԱԿ-ի նմանատիպ հարցման մերժումը ՀՀ պաշտպանության նախարարությունը տրամադրել է ընդամենը 5 օրում, ապա 25.05.2011թ.-ի հարցմամբ խնդրվող տեղեկությունների տրամադրումը նախարարությունը մերժել է 23-օրյա ժամկետում: Ինչպես նշվեց՝ միակ հղումի հեղինակը ՀՀ բնապահպանության նախարարությունն է. www.e-gov.am եւ www.minfin.am կայքերին նախարարությունը հղում է արել գրավոր՝ 6-օրյա ժամկետում:

ԻԱԿ-ի 27.11.2010 եւ 25.05.2011թ.թ.-ի հարցումներին պատասխանելու ժամկետները համեմատելիս երեւում է, որ ԻԱԿ-ի 2 հարցումներին միեւնույն նախարարության պատասխանների ժամկետների տարբերությունը հիմնականում տատանվում է մի քանի օրվա մեջ՝ չի գերազանցում 10 օրը: Սակայն կան բացասական եւ դրական բացառություններ. ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը վատացրել է հարցմանը պատասխանելու ժամկետների իր արդյունքը՝ այս անգամ հարցմանը պատասխանելով 26-օրյա ժամկետում՝ նախկին հարցման պատասխանի 9-օրյա ժամկետի դեպքում, իսկ ՀՀ պաշտպանության նախարարությունը իր արդյունքը վատացրել է 18 օրով՝ նախկինում 5-օրյա ժամկետում մերժում ներկայացնելու դեպքում այս անգամ գրավոր մերժումն ուղարկելով 23 օրում: ՏԱ հարցումներին պատասխանելու ժամկետների առումով նախկինի համեմատ իր աշխատանքը բարելավել է ՀՀ արդարադատության նախարարությունը, որը ԻԱԿ-ի նախկին հարցմանը պատասխանել է 23 օրում, իսկ 25.05.2011թ.-ի հարցմանը՝ 10-օրյա ժամկետում: Դրական է նաեւ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության առաջընթացը. նախկինում ԻԱԿ-ի հարցումներն

www.foi.am

առհասարակ անպատասխան թողնելու փոխա-
րեն ԱԻՆ-ը այս անգամ 5-օրյա ժամկետում պա-
տասխանել է ԻԱԿ-ի կրկնակի հարցմանը:

Նախարարությունների պատասխաններն ամ-
փոփենք թերեւս ամենադրական օրինակով. ՀՀ
առողջապահության նախարարությունը, թեեւ
ուշացումով, բայց տրամադրել է ԻԱԿ-ի
27.11.2010թ.-ի հարցումով խնդրված տեղեկու-
թյունները: Բացի այդ, ԻԱԿ-ի՝ 25.05.2011թ.-ի
հարցմանը լիարժեք պատասխանելով 5-օրյա
ժամկետում՝ ՀՀ առողջապահության նախարա-
րությունը բոլոր նախարարությունների՝
25.05.2011թ.-ի հարցմանը պատասխանելու
ժամկետների առումով ցույց է տվել լավագույն
արդյունքը: Նշենք նաեւ, որ ԻԱԿ-ի 2010թ.-ի նո-
յեմբերի 27-ի հարցմանը պատասխանած 17 նա-
խարարությունները (հաշվի առնված չի ԻԱԿ-ի
հարցումն անպատասխան թողած ՀՀ արտա-
կարգ իրավիճակների նախախարարությունը)
հարցումներին պատասխանել են միջինը (հաշ-
վարկված է թվաբանական միջինով) 18-օրյա
ժամկետում: Այս դեպքում հաշվի է առնված նաեւ
ՀՀ առողջապահության նախարարության պա-
տասխանի ժամկետը, որը գերազանցել է 5 ամի-
սը: Առանց առողջապահության նախարարու-
թյան ցուցանիշի՝ մնացած 16 նախարարությու-
նների՝ ԻԱԿ-ի հարցմանը պատասխանելու միջին
ժամկետը 8 օր կլինի: Իսկ ԻԱԿ-ի 2011թ.-ի մայի-
սի 25-ի հարցմանը բոլոր նախարարությունները
արդյունքում պատասխանել են, եւ նրանց պա-
տասխանների միջին ժամկետը 12 օր է:

Տեղեկատվական վեճերի խորհրդի եզրակացությունը «Հայկական ժամանակ» օրաթերթում հրապարակված՝ «Ութից յոթը ցուցակում են» վերտառությամբ հոդվածի վերաբերյալ

Հոկտեմբերի 21-ին Տեղեկատվական վեճերի խորհուրդը հրապարակել է 14.10.2010թ. «Հայկական ժամանակ» օրաթերթի թիվ 188 (2623) համարում հրապարակված «Ութից յոթը ցուցակում են» վերտառությամբ հոդվածի վերաբերյալ իր փորձագիտական եզրակացությունը:

Լ Կատի ունենալով, որ Տեղեկատվական վեճերի խորհրդի գործառույթն է զրպարտության եւ վիրավորանքի վերաբերյալ վեճերով խորհրդատվական բնույթի մասնագիտական եզրակացություններ կազմելն ու հրապարակելը՝ խորհուրդը սեփական նախաձեռնությամբ ուսումնասիրել է 14.10.2010թ. «Հայկական ժամանակ» օրաթերթի թիվ 188 (2623) համարում հրապարակվել է «Ութից յոթը ցուցակում են» վերտառությամբ հոդվածը, որն ուղեկցվել է ութ անձանց, այդ թվում՝ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Ռուբեն Հայրապետյանի, Լեւոն Սարգսյանի եւ Սամվել Ալեքսանյանի լուսանկարների հրապարակմամբ, եւ հրապարակել իր մասնագիտական եզրակացությունը:

ՀՀ Ազգային ժողովի վերոնշյալ պատգամավորները 08.11.2010թ. դիմել են Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան: 07.02.2011թ. առաջին ատյանի դատարանը կայացրել է վճիռ՝ պարտավորեցնելով «Դարեսկիզբ» ՍՊԸ-ին՝ հերքելու «Հայկական ժամանակ» օրաթերթի 2010 թվականի հոկտեմբեր 14-ի թիվ 188 համարի առաջին էջի կենտրոնում հրապարակված «Ութից յոթը ցուցակում են» խորագրով հոդվածում հայցվորներ Ռ. Հայրապետյանի, Լ. Սարգսյանի, Ս. Ալեքսանյանի պատիվն ու արժանապատվությունն արատավորող (զրպարտող) տեղեկությունները եւ հերքումը տպագրել «Հայկական ժամանակ» օրաթերթում՝ վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո մեկշաբաթյա ժամկետում «Հերքում» խորագրի ներքո: Վճռվել է նաեւ «Դարեսկիզբ» ՍՊԸ-ից հոգուտ Ս. Ալեքսանյանի, Ռ. Հայրապետյանի, Լ. Սարգսյանի համապատասխանաբար բռնա-

գանձել 2.044000-ական (երկու միլիոն քառասունչորս հազար) ՀՀ դրամ յուրաքանչյուրի համար, որից՝ 2000000 (երկու միլիոն) ՀՀ դրամը՝ որպես փոխհատուցման գումար, 44.000 (քառասունչորս հազար) ՀՀ դրամը՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար: «Հայկական ժամանակ» օրաթերթը վճիռը բողոքարկել է, սակայն, ՀՀ վերաքննիչ դատարանը մերժել է բողոքը: Վերաքննիչ դատարանի որոշումը բողոքարկվել է վճռաբեկության կարգով, եւ ՀՀ վճռաբեկ դատարանը բողոքը ետ է վերադարձրել:

Տեղեկատվական վեճերի խորհուրդը, գնահատելով վիճարկվող հոդվածը եւ դատարանների վճիռները ՀՀ Սահմանադրության, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի եւ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի պահանջների համատեքստում, գտնում է, որ վիրավորանքի եւ զրպարտության գործերով ներկայումս լայնորեն ճանաչված սկզբունք է, որ որոշ հանգամանքների ներքո լրատվամիջոցները եւ լրագրողները պետք է պաշտպանված լինեն նույնիսկ իրականությանը չհամապատասխանող եւ զրպարտող բնույթի հայտարարությունների համար: Այս սկզբունքն արտահայտվում է մի շարք պաշտպանական կառուցակարգերով, որոնք հետեւյալն են՝ բարեխիղճ հայտարարություն (fair comment), ողջամիտ հրապարակում (reasonable publication), այլ անձանց հայտարարությունների վերարտադրում: Ըստ եվրոպական դատարանի, «Հարցազրույցի ընթացքում ուրիշի կողմից արված հայտարարությունների տարածմանն աջակցող լրագրողին պատժելը լրջորեն կխոչընդոտի՝ հանրային շահին առնչվող հարցերի քննարկմանը՝ մամուլի ունեցած նպաստին եւ նման պատիժ

չպետք է նախատեսվի, եթե չկան դրա համար առանձնապես հիմնավոր պատճառներ»:

Տեղեկատվական վեճերի խորհուրդը գտնում է, որ եվրոպական դատարանի փորձի հիման վրա անհրաժեշտ է քննարկել լրատվամիջոցի տեղեկատվության աղբյուրի, այդ աղբյուրի վստահելիության, լրագրողի կողմից անհրաժեշտ ուսումնասիրություն կատարելու, լրատվանյութը հավասարակշռված կերպով տարածելու, լրատվամիջոցի կողմից զրպարտված անձանց իրենց պաշտպանելու ողջամիտ հնարավորություն ընձեռելու եւ փաստերը ստուգելու ողջամիտ հնարավորություն ունենալու հարցը: Հոդվածի հրապարակումից հետո լրատվամիջոցը բացահայտել է իր տեղեկատվության աղբյուրը՝ «Հայկական ժամանակ» օրաթերթի 2010թ. նոյեմբերի 2-ի համարում հրապարակելով լրատվամիջոցին համապատասխան տեղեկություններ տրամադրած անձի/տեղեկատվության աղբյուր/ հետ ընդարձակ հարցազրույցը, որով վերջինս ընդունել է համապատասխան տեղեկությունների տրամադրման փաստը եւ հաղորդել է նաեւ նշված հրապարակմանը առնչվող այլ մանրամասներ: Հատկանշական է, որ լրատվամիջոցն իր աղբյուրը բացահայտել է դեռ արտադատական փուլում՝ հայցվորներին ուղարկած նամակով:

Լրատվամիջոցի աղբյուրի բացահայտումը խոսում է լրագրողական բարեխղճության դրսևորման, լրատվամիջոցի կողմից իր աղբյուրի նկատմամբ վստահության առկայության, ակնհայտ չարամտության (actual malice) բացակայության եւ լրատվամիջոցի կողմից զրպարտված անձանց՝ իրենց պաշտպանելու ողջամիտ հնարավորություն ընձեռելու մասին: «Բարեխիղճ հայտարարություն» չափորոշիչի կարելոր տարրերից է նաեւ լրատվանյութի հասարակական հետաքրքրություն ներկայացնելու հանգամանքը:

Ինչ վերաբերվում է լրատվանյութի հավասարակշռված կերպով տարածելու չափորոշիչին, ապա այս առումով հոդվածի հեղինակը խուսափել է հանցագործությունների կատարմանը «մասնակցություն» արտահայտության օգտագործումից, որն հակառակ դեպքում կենթադրեր համապատասխան հանցագործությունների կատարման մեջ հիշատակված պաշտոնատար անձանց ուղղակի մեղադրանքի առաջադրում:

Խորհուրդը գտնում է, որ դատարաններն իրենց որոշումներում չեն կիրառել վերը նշված չափորոշիչները: Ավելին, դատական վարույթն իրականացվել է այնպես, որ լրատվամիջոցի ներկայացուցիչը զրկվել է վերը նշված պաշտպանությունից օգտվելու համար իր փաստարկները եւ փաստաթղթերը ներկայացնելու հնարավորությունից: Այս ամենը հանգեցրել է լրատվամիջոցի ազատ արտահայտվելու իրավունքի անհամաչափ միջամտությանը:

Խորհուրդը համաձայն չէ նաեւ վերաքննիչ դատարանի այն եզրահանգման հետ, որ «պատասխանողը կարող էր ազատվել պատասխանատվությունից միայն այն դեպքում, եթե հոդվածում հստակ հղում կատարված լիներ այլ անձի հրապարակային ելույթին, որը տեղի է ունեցել մինչեւ հրապարակումը եւ որ այդ հրապարակումը լիներ այլ անձի հրապարակային ելույթի բառացի կամ բարեխիղճ վերարտադրությունը»:

Խորհուրդը գտնում է, որ դատարանի նման եզրահանգումը խիստ սահմանափակող բնույթ ունի:

Մյուս կողմից, որպես նվազագույն պայման պահանջվում է, որպեսզի լրագրողն իրեն բավարար չափով տարանջատի զրպարտող կամ վիրավորող բնույթի հայտարարության բովանդակությունից: «Բավարար չափով» հասկացությունը որոշվում է յուրաքանչյուր գործի հանգամանքների ներքո, մասնավորապես, թե արդյոք լրագրողը կամ լրատվամիջոցը տվյալ հանգամանքների ներքո եւ ողջամտության սահմաններում կիրառե՞լ է նվազագույն ճիգեր տեղեկատվության ճշգրտությունը ստուգելու համար: Թեեւ յուրաքանչյուր գործ յուրահատուկ է իր փաստական հանգամանքներով, սակայն բոլոր դեպքերում ընթերցողը պետք է ստանա այն տպավորությունը, որ հրապարակվածը ոչ թե լրատվամիջոցի հայտարարությունն է կամ կարծիքը, այլև լրագրողական աղբյուրի հայտարարության վերարտադրությունն է՝ խուսափելով ընթերցողին մոլորության մեջ գցելուց:

Ինչ վերաբերում է սահմանված փոխհատուցման չափին, Խորհուրդը գտնում է, որ հայցվորների կողմից պահանջվող 6,000.000 (վեց միլիոն) ՀՀ դրամի չափով փոխհատուցման պահանջը ակնհայտորեն չի բխում միջամտության համաչափության եւ անհրաժեշտության սկզբունքներից:

րից, քանի որ լրատվամիջոցը հայտնվում է խիստ անհամաչափ ծանր ֆինանսական բեռի տակ, որի արդյունքում վտանգվում է լրատվամիջոցի բնականոն գործունեությունը, որը որպես այդպիսին որեւէ առնչություն չունի հայցվորների արդարացի փոխհատուցման պահանջի հետ: Միջամտության համաչափության հարցում ՄԻԵԴ-ի մոտեցման համաձայն՝ պահանջվող փոխհատուցման չափը որոշելիս ներպետական դատարանները պետք է հաշվի առնեն այն անձանց սահմանափակ միջոցները, որոնց դեմ բերվում են զրպարտության կամ վիրավորանքի մասին

հայցերը: Դատավարական սահմանափակումներն անկասկած պատասխանող լրատվամիջոցին դատավարության մյուս կողմի համեմատ դրել են անհավասար պայմանների մեջ:

Այսպիսով, Տեղեկատվական վեճերի խորհուրդն արձանագրում է, որ վերոնշյալ սկզբունքների, վերլուծությունների եւ չափանիշների լույսի ներքո դատարանները դրսևորել են անհամաչափ միջամտություն լրատվամիջոցի ազատ արտահայտվելու իրավունքին:

Տեղեկատվական վեճերի խորհուրդ

Ընդդեմ «Չորրորդ ինքնիշխանություն» օրաթերթի գործի վերաբերյալ Տեղեկատվական վեճերի խորհրդի եզրակացությունը

Հոկտեմբերի 28-ին Տեղեկատվական վեճերի խորհուրդը հրապարակել է 09.04.2011թ. «Չորրորդ ինքնիշխանություն» թերթի թիվ 322 համարում հրապարակված «Ճանաչել Փարավոնին» վերնագրով հոդվածի վերաբերյալ իր փորձագիտական եզրակացությունը:

1. Գործի հանգամանքները

09.04.2011թ. «Չորրորդ ինքնիշխանություն» թերթի թիվ 322 համարում հրապարակվել է «Ճանաչել Փարավոնին» վերնագրով հոդված ՀՀ Ազգային պատկերասրահի տնօրեն Փարավոն Միրզոյանի մասին:

Փարավոն Միրզոյանը դիմել է Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ դատարան)՝ դատարանից պահանջելով պարտավորեցնել «Կողմնակի անձանց Մ» ՍՊ ընկերությանը պատկանող «Չորրորդ ինքնիշխանություն» թերթին հերքել իր հեղինակությունն արատավորող տեղեկությունները, հօգուտ հայցվորի ՍՊԸ-ից բռնագանձել 3.000.000 ՀՀ դրամ որպես փոխհատուցում վիրավորանքի եւ զրպարտության հետեւանքով իր պատվին ու արժանապատվությանը պատճառված վնասի դիմաց եւ 360.000 ՀՀ դրամ որպես փոխհատուցում իր կողմից կատարված դատական ծախսերի դիմաց:

Դատարանը գործով դեռեւս վճիռ չի կայացրել:

2. Տեղեկատվական վեճերի խորհրդի գործառույթը

Նկատի ունենալով, որ Տեղեկատվական վեճերի խորհրդի գործառույթն է զրպարտության եւ վիրավորանքի վերաբերյալ վեճերով խորհրդատվական բնույթի մասնագիտական եզրակացությունների կազմումն ու հրապարակումը՝ խորհուրդը «Չորրորդ ինքնիշխանություն» թերթի դիմումի հիման վրա ուսումնասիրել է վիճարկվող հոդվածը եւ հրապարակել իր մասնագիտական եզրակացությունը:

3. Ներպետական եւ միջազգային իրավունքի համապատասխան սկզբունքները

ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի համաձայն.

«Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք...:

Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ եւ գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած

միջոցով՝ անկախ պետական սահմաններից:

Լրատվամիջոցների եւ տեղեկատվության այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է...»:

ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի համաձայն.

«Մարդու եւ քաղաքացու՝ Սահմանադրության 27 հոդվածով...ամրագրված հիմնական իրավունքները եւ ազատությունները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում այլոց սահմանադրական իրավունքների եւ ազատությունների, պատվի եւ բարի համբավի պաշտպանության համար:

Մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները»:

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ ՄԻԵԿ կամ Կոնվենցիա) 10-րդ հոդվածի համաձայն.

1. «Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ եւ գաղափարներ ստանալու եւ տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության եւ անկախ սահմաններից: Այս հոդվածը չի խոչընդոտում պետություններին՝ սահմանելու ռադիոհաղորդումների, հեռուստատեսային կամ կինեմատոգրաֆիական ձեռնարկությունների լիցենզավորում:

2. Այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների եւ պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձեւականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով եւ անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ... այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդա-

րադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով»:

ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածից եւ ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածի 2-րդ մասից բխում է, որ անձի արտահայտվելու ազատությունը կարող է սահմանափակվել, եթե միջամտությունը՝

- «նախատեսված է օրենքով»,
- ծառայում է հոդվածում թվարկված «իրավաչափ նպատակներից» առվազն մեկին, տվյալ դեպքում՝ անձի «պատվի եւ բարի համբավի» եւ կամ «հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելուն», եւ «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում»:

Այս վերջին պայմանը պահանջում է, որպեսզի ՄԻԵԿ-ը որոշի, թե արդյոք գանգատի առարկա միջամտությունը բխո՞ւմ է «հրատապ հասարակական կարիքից», արդյոք այն համաչափ է իր առջեւ դրված «իրավաչափ նպատակին եւ արդյոք իշխանությունների կողմից միջամտության արդարացման նպատակով առաջ քաշված պատճառները «վերաբերելի՞ են եւ բավարար»:

4. Վիճարկվող հոդվածի վերլուծությունը

Վիճարկվող հոդվածի՝ հայցադիմումում մեջ բերված արտահայտությունների գնահատումը հիմնված է ՀՀ Սահմանադրության, ՄԻԵԿ 10-րդ հոդվածի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի եւ լրագրողական էթիկայի պահանջների վրա:

Վիճարկվող հոդվածի վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանում ներառված արտահայտությունների մի մասը գնահատական-դատողություններ են եւ լրագրողի արտահայտած կարծիք, ինչը, որպես այդպիսին, պաշտպանված է ՄԻԵԿ 10-րդ հոդվածով: Սույն արտահայտությունները հրապարակելիս լրագրողն օգտվել է երգիծանքի ոճով ստեղծագործելու իր իրավունքից, ինչը եւս պաշտպանված է ՄԻԵԿ 10-րդ հոդվածով: Կոնվենցիայի 10-րդ հոդվածը պաշտպանում է ոչ միայն տեղեկությունները, այլեւ դրանց մատուցման ոճը եւ եղանակը: Վիճարկվող արտահայտությունների մնացած մասը զուրկ չէ փաստական հիմքերից:

Միեւնույն ժամանակ, հայցվորի կողմից գր-

պարտչական բնույթի որակվող արտահայտությունները մինչ այդ հրապարկվել են մեկ այլ լրատվամիջոցի կողմից եւ «Չորրորդ ինքնշխանություն» թերթը եւս մեկ անգամ անդրադարձել է դրանց՝ սկզբնաղբյուր հանդիսացող լրատվամիջոցին համապատասխան հղում կատարելով:

Իրերը գնահատելով իրենց համատեքստում, Խորհուրդը գտնում է, որ սույն գործը լուծելիս նպատակահարմար է կիրառել Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված իրավական պաշտպանության բարձր չափանիշ, այն է, որ յուրաքանչյուր դեպքում լրատվամիջոցի ազատ արտահայտվելու իրավունքի միջամտության անհրաժեշտության հարցը պետք է գնահատվի ելնելով այն սկզբունքից, թե արդյոք միջամտության համար առկա է հասարակական սուր պահանջ եւ թե արդյոք նման միջամտությունն «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում»: Նպատակահարմար է, որ պետքի դատարանը տվյալ վեճը դիտի ոչ միայն մրցակցող անհատական շահերի, այլ նաեւ հանրային շահի տեսանկյունից: Այսպիսով, որոշումը կայացնելիս դատարանը կարող է դուրս գալ մր-

ցակցող կողմերի նեղ անձնական շահերի շրջանակներից եւ կայացնել այնպիսի որոշում, որը կարող է բարենպաստ հետեւանք առաջացնել ողջ հանրության համար:

5. Եզրահանգում

Տեղեկատվական վեճերի խորհուրդը գտնում է, որ վիճարկվող խնդիրը ոչ այնքան իրավական, որքան լրագրողական էթիկայի դաշտում է: Ուստի, ողջամիտ եւ արդյունավետ կլիներ, եթե հայցվորը հարցի քննությունը հանձներ ոչ թե դատարանին, այլեւ արտադատական մարմիններին՝ մասնավորապես, Էթիկայի դիտորդ մարմնին՝ վիճահարույց հոդվածը քննելու եւ գնահատական տալու համար:

Ի դեպ, «Չորրորդ ինքնշխանություն» թերթը տեղեկացրել է Տեղեկատվական վեճերի խորհրդին, որ դիմել էթիկայի դիտորդ մարմնին՝ ստանալու նաեւ նրա կարծիքը:

Տեղեկատվական վեճերի խորհուրդ

Վիրավորանք եւ զրպարտություն. օրենսդրական կարգավորումը եւ դատական պրակտիկայի խնդիրները

Շուշան Դոյդոյան, ԵՊՀ դոցենտ

Փետրոգ Հայրապետյան, իրավաբան

Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված մի շարք միջազգային իրավական ակտեր պաշտպանում են մարդու պատիվն ու արժանապատվությունը, մասնավորապես՝ խոսքի ազատության իրավունքը սահմանափակելու միջոցով՝ նշելով, որ խոսքի ազատությունը բացարձակ չէ եւ կարող է սահմանափակվել մարդու պատվի եւ արժանապատվության պաշտպանության նպատակով: Այսպես, Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 19-րդ հոդվածը, ինչպես նաեւ Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածը նշում է, որ խոսքի ազատությունը ենթակա է սահմանափակման այլոց իրավունքներն ու հեղինակությունը հարգելու նպատակով: Հայաստանի Հանրապետության կողմից մարդու արժանապատվությունը հռչակվել է որպես բարձրագույն արժեք, որի երաշխավորը պետությունն ինքն է: ՀՀ Սահմանադրության՝ մարդու իրավունքներն ու ազատությունները սահմանող 2-րդ գլուխը բացվում է հենց մարդու արժանապատվությունը ամրագրող 14-րդ հոդվածով. «Մարդու արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների ու ազատությունների անքակտելի հիմք, հարգվում եւ պաշտպանվում է պետության կողմից»:

Մինչ 2010թ. մայիս Հայաստանի Հանրապետությունում գործում էր պատվի եւ արժանապատվության պաշտպանության քաղաքացիական եւ քրեաիրավական կարգ: 2010թ. մայիսին ընդունված օրենսդրական բարեփոխությունների արդյունքում զրպարտությունը եւ վիրավորանքն ապաքրեականացվեցին, եւ այդուհետ խնդիրը կարգավորվում է բացառապես քաղաքացիական իրավունքի շրջանակում:

Որպես անձի պատվի եւ արժանապատվության պաշտպանության սահմանադրական իրավունքի ապահովման երաշխիք՝ ՀՀ Քաղաքացիական

օրենսգրքի 19--րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Անձի պատիվը, արժանապատվությունը, գործարար համբավը ենթակա են պաշտպանության այլ անձի կողմից հրապարակայնորեն արտահայտված վիրավորանքից եւ զրպարտությունից՝ սույն օրենսգրքով եւ այլ օրենքներով սահմանված դեպքերում ու կարգով»:

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 3-րդ կետի՝ «զրպարտությունը անձի վերաբերյալ այնպիսի փաստացի տվյալներ (statement of fact) հրապարակային ներկայացնելն է, որոնք չեն համապատասխանում իրականությանը եւ արատավորում են նրա պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը»:

Այսպիսով, ինչպես երեւում է հոդվածից, զրպարտության դեպքում պետք է առկա լինեն հետեւյալ բոլոր հանգամանքները.

- ա) Առկա է մեկ ուրիշին կոնկրետ փաստ, արարք կամ արարքներ կատարելու մեջ մեղադրանք: Օրինակ՝ նախարարը կաշառք է վերցրել, վատնել է վարկային գումարները եւ այլն:
- բ) Երկրորդ հանգամանքն այն է, որ հրապարակված փաստացի տվյալները ունենան արատավորող բնույթ:
- գ) Երրորդ հանգամանքն այն է, որ փաստացի տվյալները պետք է չհամապատասխանեն իրականությանը: Անձը ենթակա չէ պատասխանատվության, եթե տարածված տեղեկությունները համապատասխանում են իրականությանը, նույնիսկ եթե դրանք արատավորում են մարդու պատիվն ու արժանապատվությունը: Անձն ազատվում է պատասխանատվությունից նաեւ այն դեպքում, եթե տեղեկությունները չեն համապատասխանում իրականությանը, բայց նաեւ արատավորող չեն:

դ) Արատավորող տեղեկությունները պետք է վերաբերեն կոնկրետ անձի կամ անձանց:

ե) Տեղեկությունները պետք է տարածված լինեն որեւէ եղանակով, ներկայացված լինեն հրապարակային:

Անդրադառնալով գրապարտության հետ կապված մի քանի խնդիրների, որոնք անմիջականորեն առնչվում են դատարաններին, դատարանների գործունեությանը եւ վիրավորանքի եւ գրապարտության գործերի քննման առանձնահատկություններին: Չրպարտության դեպքում կարելու պայմաններից է այն, որ տարածված տեղեկատվությունը պետք է արատավորի մարդու պատիվն ու արժանապատվությունը: Տեղեկություններն արատավորող ճանաչելու չափանիշները, սակայն, բացակայում են օրենսդրության մեջ: Այդ դեպքում ի՞նչը պետք է հիմք ընդունի դատարանը՝ դրանք արատավորող ճանաչելու համար: Յուրաքանչյուր դեպքում դատարանը հիմք է ընդունում այն, թե արդյոք տարածված տեղեկությունները հասարակության մեջ ընկալվում են որպես արատավորող, դատապարտելի: Դատարանը, ելնելով ձեւավորված բարոյական նորմերից, հասարակական ընկալումից եւ պատկերացումներից, յուրաքանչյուր կոնկրետ դեպքում որոշում է տարածված փաստական տվյալների արատավորող բնույթը: Եթե տարածված տեղեկությունները հասարակությունում ընկալվում են որպես արատավորող, օրինակ, կաշառակեր, գող, ապա միանշանակ դրանք դատարանը կճանաչի արատավորող:

Եթե դատաքննությամբ ապացուցվում է տեղեկությունների արատավորող բնույթը, ապա պետք է պարզվի նաեւ, թե արդյոք դրանք համապատասխանում են իրականությանը: Այսպիսով, պատվի եւ արժանապատվության հայցը կարող է բավարարվել, եթե տեղեկությունները լինեն եւ արատավորող, եւ ոչ հավաստի: Տեղեկությունները համարվում են ոչ հավաստի, քանի դեռ հակառակը չի ապացուցվել: Այսպիսով, քանի որ օրենսդիրը չի կարող եւ չի սահմանում գրապարտություն հանդիսացող կոնկրետ արտահայտությունները եւ բառերը, ուստի, դատավորների առջև յուրաքանչյուր դեպքում խնդիր է առաջանում մեկնաբանելու վիճարկվող արտահայտությունը կամ բառը: Հաշվի առնելով վիրավորանքի եւ գրապարտության՝ քաղաքացիական դատա-

վարության ոլորտի ոչ երկար պատմությունը՝ հարց է առաջանում՝ կկարողանա՞ն արդյոք դատավորները վիրավորանքի եւ գրապարտության վերաբերյալ վերոնշյալ հոդվածի կիրառման դրական դատական պրակտիկա ձեւավորել, արդյոք շատ չէ՞ն լինի դատավարական-մեկնաբանական սխալները:

Վիրավորանքի եւ գրապարտության մեկնաբանման եւ կիրառման վերաբերյալ հսկայական նյութ են պարունակում Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի որոշումները: Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի մի շարք որոշումներ հնարավորություն են տալիս սահմանել կարծիք, դատողություն ՎՆ փաստերեւույթների վերաբերելիությունը գրապարտությանը: Այլ կերպ ասած՝ ՀՀ դատավորները կարող են կոնկրետ դեպքում վիճարկվող արտահայտությունը կամ բառը որպես վիրավորանք որակելու հարցում օգտվել Եվրոպական դատարանի նախադեպից: Օրինակ, 1999թ. Դալբանի գործով Եվրոպական դատարանի որոշել է, որ մամուլը պարտավոր է տեղեկություններ եւ գաղափարներ հաղորդել հասարակական հետաքրքրություն ներկայացնող խնդիրների վերաբերյալ եւ մերժել է այն գաղափարը, թե մամուլը չպետք է տեսակետներ արտահայտի, քանի դեռ չի կարող ապացուցել դրանց ճշմարտացիությունը: Պատվի, արժանապատվության գործեր քննելիս դատարանը պետք է փաստերը տարբերակի գնահատական-դատողություններից, վերջիններս ենթակա չեն ապացուցման: 2001 թվականի փետրվարի 27-ին «Երուսաղեմն ընդդեմ Ավստրիայի» գործով դատարանը որոշեց, որ գնահատող դատողությունների հավաստիությունն ապացուցելու պահանջն անհնար է կատարել եւ որ այն ոտնահարում է կարծիք արտահայտելու ազատությունը՝ Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածով երաշխավորված իրավունքը: Սակայն մյուս կողմից գնահատող դատողությունը պետք է համոզիչ եւ փաստացի հիմքեր ունենա: Դատարանը նշել է, որ եթե փաստերի հավաստիությունը կարող է ապացուցվել, ապա գնահատող դատողությունների ճշմարտացիությունն անապացուցելի է, ուստի լրագրողը պետք է ազատվի «անապացուցելի» ապացուցելու պարտականությունից: Ըստ դատարանի գրապարտչական կամ վիրավորական կարծիքի ապացուցման պահանջը խախտում է

www.foi.am

10-րդ հոդվածով սահմանված կարծիք արտահայտելու իրավունքը:

Նշենք, որ զրպարտության դեպքում դիտավորությունը պարտադիր պայման չի համարվում: Հնարավոր է՝ լրագրողն արատավորող տեղեկությունները տարածել է ոչ թե դիտավորությամբ, այլ անփութությամբ: Սա նրան պատասխանատվությունից չի ազատում:

Զրպարտության կարգավորման եւ կիրառման խնդիրներից է նաեւ այն, որ ապացուցման պարտականությունը դրված է պատասխանող կողմի՝ այսինքն լրատվամիջոցի վրա. ՀՀ Զաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Զրպարտության վերաբերյալ գործերով անհրաժեշտ փաստական հանգամանքների առկայության կամ բացակայության ապացուցման պարտականությունը կրում է պատասխանողը: Այն փոխանցվում է հայցվորին, եթե ապացուցման պարտականությունը պատասխանողից պահանջում է ոչ ողջամիտ գործողություններ կամ ջանքեր, մինչդեռ հայցվորը տիրապետում է անհրաժեշտ ապացույցներին», ՉԼ մասին օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի՝ ապացուցման պարտականությունը դրված է պատասխանող կողմի՝ այսինքն լրատվամիջոցի վրա: Միջազգային չափանիշները լայնորեն սահմանում են, որ ապացուցման բեռը պետք է դրվի ոչ թե լրատվամիջոցի, այլ հայցվոր կողմի վրա: Եվրոպական դատարանը 1999 թվականի մայիսին «Բլադեթ Տրոմգո եւ Սթենսասն ընդդեմ Նորվեգիայի» գործով կայացրած որոշմամբ լրագրողի առաջ ոչ թե դնում է տարածած տեղեկատվության հավաստիությունն ապացուցելու պարտականություն, այլ միայն նշում է, որ լրագրողական նյութերը պետք է «հիմնականում հավասարակշռված լինեն»:

Վիրավորանքը սահմանվում է ՀՀ Զաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 2-րդ մասով. «Վիրավորանքը խոսքի, պատկերի, ձայնի, նշանի կամ այլ միջոցով պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորելու նպատակով կատարված հրապարակային արտահայտությունն է»:

Վիրավորանքի էությունն այն է, որ հանցավորը տուժողին տալիս է այնպիսի բացասական գնահատական, կպցնում է այնպիսի պիտակ, որը

նսեմացնում է նրա պատիվն ու արժանապատվությունը: Վիրավորանք հասցնողի դիտավորությունն է հասարակության աչքում նսեմացնել տուժողի հեղինակությունը: Ընդ որում, վիրավորանքը կարող է հասցվել ինչպես խոսքի, այնպես էլ պատկերի, ձայնի, նշանի, գործողության կամ որեւէ այլ միջոցով:

Նույն հոդվածի 2-րդ մասում նշվում է, որ. «... հրապարակային արտահայտությունը տվյալ իրավիճակում եւ իր բովանդակությամբ կարող է չհամարվել վիրավորանք, եթե այն հիմնված է ստույգ փաստերի վրա (բացառությամբ բնական արատների) կամ պայմանավորված է գերակա հանրային շահով»: Այսպիսով, եթե հրապարակվածը թեւեւ արատավորում է պատիվն ու արժանապատվությունը, սակայն համապատասխանում է իրականությանը, ինչպես նաեւ եթե հրապարակվածը պայմանավորված է հանրային գերակա շահով, վիրավորանք հրապարակած անձն ազատվում է պատասխանատվությունից:

Նշենք, որ ի տարբերություն վիրավորանքի նախկին՝ քրեաիրավական կարգավորման՝ ներկայումս վիրավորանքի անկարկեշտ ձեւն այլեւս պարտադիր պայման չէ:

Միաժամանակ, վիրավորական բառերի հետ կապված Թամերն ընդդեմ Էստոնիայի վճռում Եվրոպական դատարանը հստակեցրել է, որ վիրավորական կամ ոչ վիրավորական լինելու հանգամանքը մեկնաբանելիս պետք է նկատի ունենալ, որ լրատվությունը նախատեսված չէ լեզվաբանների նեղ խմբի համար, այլ ուղղված է լայն հասարակությանը:

ՀՀ Զաղ. օրենսգրքի ընդդեմ նաեւ սահմանում է այն դեպքերը, երբ արատավորող փաստացի տվյալները հրապարակային ներկայացնելը չի համարվում զրպարտություն: Դրանք այն դեպքերն են, երբ տվյալները.

1) տեղ են գտել մինչդատական կամ դատական վարույթի ընթացքում վարույթի մասնակցի կողմից քննվող գործի հանգամանքների վերաբերյալ կատարված արտահայտությունում կամ ներկայացրած ապացույցներում.

2) դա տվյալ իրավիճակում եւ իր բովանդակությամբ պայմանավորված է գերակա հանրային շահով, եւ եթե փաստացի տվյալները հրապարակված են:

րակայնորեն ներկայացրած անձն ապացուցի, որ ողջամտության սահմաններում ձեռնարկել է միջոցներ՝ պարզելու դրանց ճշմարտությունը եւ հիմնավորվածությունը, ինչպես նաեւ հավասարակշռված եւ բարեխղճորեն է ներկայացրել այդ տվյալները:

3) այն բխում է զրպարտության ենթարկված անձի կամ նրա ներկայացուցչի հրապարակային ելույթից կամ պատասխանից կամ նրանցից ելնող փաստաթղթից (հոդված 1087.1, 5-րդ մաս): Նաեւ, լրատվամիջոցն ազատվում է վիրավորանքի կամ զրպարտության համար պատասխանատվությունից, եթե իր արտահայտած կամ ներկայացրած փաստացի տվյալները լրատվական գործակալության տարածած տեղեկատվության, ինչպես նաեւ այլ անձի հրապարակային ելույթի, պաշտոնական փաստաթղթերի, լրատվության այլ միջոցի կամ հեղինակային որեւէ ստեղծագործության բովանդակած տեղեկատվության բառացի կամ բարեխիղճ վերարտադրությունն են, եւ դա տարածելիս հղում է կատարվել տեղեկատվության աղբյուրին (հեղինակին):

Նշենք, որ վիրավորանքի եւ զրպարտության վերաբերյալ լրատվամիջոցների դեմ հարուցված տասնյակից ավելի դատական գործերը հնարավորություն են տալիս վերհանել վիրավորանքի եւ զրպարտության վերաբերյալ գործերի եւս մի քանի հիմնական խնդիրներ: Այսպես, բոլոր դեպքերում որպես պատասխանող կողմ հանդես է գալիս լրատվամիջոցը: Սա նշանակում է, որ Հայաստանում վիրավորանքի եւ զրպարտության համար սահմանված պատասխանատվությունը մարդու արժանապատվության պաշտպանության միջոցից կարող է վերածվել լրատվամիջոցների դեմ հաշվեհարդարի միջոցի: Այս տենդենցը կարող է հանգեցնել մարդու մեկ այլ կարեւոր իրավունքի ոտնահարման, այն է ազատ արտահայտվելու, խոսքի ազատության իրավունքը: Դալբանի գործով եւ «Երուսաղեմն ընդդեմ Ավստրիայի» գործով եվրոպական դատարանի կայացրած որոշումները եւ դատարանի մեկնաբանությունները, որոնք ներկայացվեցին քիչ առաջ, հավաստում են, որ խոսքի ազատության իրավունքը չպետք է անհարկի սահմանապակվի կամ ոտնահարվի: Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածը սահմա-

նափակում է խոսքի ազատությունը այլոց իրավունքներն ու հեղինակությունը հարգելու նպատակով, այլ ոչ թե այն բոլոր դեպքերում, երբ կա թվացյալ վիրավորանք կամ զրպարտություն: Այս խնդրի լուծումը նույնպես անմիջականորեն աննչվում է դատավորներին. գիտակ դատավորը, ով կարող ուսումնասիրել եվրոպական դատարանի փորձը եւ յուրացնել այն, դրա շնորհիվ ներպետական դատական նախադեպով չսահմանված եւ մասնագիտական մեկնաբանություններով դեռեւս չթրծված այս ոլորտի՝ վիրավորանքի եւ զրպարտության չափորոշիչների բացակայության պարագայում առաջնորդվելով ոչ միայն ներպետական օրենսդրությամբ, այլ նաեւ այս ոլորտում միջազգային իրավական ակտերի դրույթներով, կկարողանա պաշտպանել մարդու արժանապատվության իրավունքը եւ միեւնույն ժամանակ թույլ չտալ խոսքի ազատության իրավունքի անհարկի ոտնահարում:

Վիրավորանքի եւ զրպարտության ոլորտում առկա է եւս մեկ հիմնական խնդիր. այս գործերով հայցվորները դատարանից հիմնականում պահանջում են պատասխանողի հանդեպ կիրառել վիրավորանքի եւ զրպարտության համար սահմանված տուգանքի առավելագույն չափը՝ համապատասխանաբար 1 մլն եւ 2 մլն դրամ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հիմնականում նման գործերով դատարան դիմելու դեպքում մատնանշվում են վիրավորանքը եւ զրպարտությունը միասին, ապա թերեւս միշտ խոսքը գնում է գումարային 3 մլն դրամի մասին: Մի դեպքում՝ Տիգրան Արզաքանցյանն ընդդեմ «Երկիր» օրաթերթի գործի դեպքում դատարանը միայն մեկ արտահայտություն համարեց վիրավորանք՝ սահմանելով 200.000 դրամի չափով տուգանք: Անկախ նրանից, համաձայն ենք դատարանի որակման հետ, թե ոչ, այս վճիռը դրական է, քան որ այս դեպքում դատավորն որոշեց ավելի ցածր տուգանք, քան սահմանված 1 մլն վերին շեմն է: Սակայն խնդիրն արդիական է: Նախ, հաշվի առնենք, այն հանգամանքը, որ վիրավորանքի եւ զրպարտության համար սահմանված գումարային 3.000.000 դրամ տուգանքը կիրառելու դեպքում դատարանի վճիռը փաստորեն լրջորեն կսպառնա Հայաստանում գործող տպագիր լրատվամիջոցների մեծամասնության գոյությանը: Այսինքն, լրատվամիջոցը եւ լրագրողը անգամ հանրային նշանակության տեղեկությունները

հրապարակելուց առաջ թերեւս կսկսեն մտածել, արդյո՞ք դա հետագայում չի դառնա լրատվամիջոցը փակելու պտճառ: Այս դեպքում նույնպես կարող է ոտնահարվել խոսքի ազատությունը այս անգամ սոցիալական պատճառով: Չմոռանաք նաեւ դատական ծախսերի մասին. մարդու արժանապատվության վերաբերյալ դատական գործերը ցույց են տալիս, որ դատական ծախսերը նույնպես տեղ ունեն այս խնդրում: Օրինակ, Յրաչ Բեշիշյանն ընդդեմ «Յրապարակ» օրաթերթի գործի դեպքում դատարանը որոշեց, որ Յրաչ Բեշիշյանի արժանապատվությունը պետք է վերականգնվի հերքման եւ նրանից թերթի եւ լրագրողի կողմից ներողություն խնդրելու միջոցով, սակայն ամեն դեպքում, կյուրակական վնաս «Յրապարակ» օրաթերթը կրեց 300.000 դրամի չափով՝ ոպես դատական ծախսերի փոխհատուցում: Յատկանշական է նաեւ Լեւոն Բոջարյանն ընդդեմ «Յայկական ժամանակ» օրաթերթի դատական գործը, որի դեպքում դատական ծախսերի վերջնական գումարը, որ պետք է վճարվեր օրաթերթի կողմից, կազմել է 3.000.000 դրամ: Նման դեպքերում, եթե դատավորների կողմից վիրավորանքի եւ գրպարտության դեպքում նույնությամբ, այլ ոչ համամասնորեն նվազեցվելով բավարարվի նաեւ գումարային 3.000.000 դրամի տուգանքի ենթարկելու պահանջը, զուտ սոցիալական ասպեկտը կդառնա խոսքի ազատության սահմանափակման հիմք, կհանդիսանա յուրօրինակ գրաքննություն, ինչն անկարելի է:

Վիրավորանքի եւ գրպարտության դատական պրակտիկան դեռեւս ձեւավորման փուլում է եւ, բնական է, որ բազում խնդիրներ կլինեն՝ կապ-

ված ինչպես օրենքի մեկնաբանման հետ, այնպես էլ խնդիրներ՝ բխող Յայաստանի եւ հայաստանյան լրատվամիջոցների առանձնահատկություններից: Այս պարագայում առանձնակի կարեւորություն է ստանում մարդկային գործոնը: Խոսքը գնում է ինչպես դատավորների մասին, որոնցից արդյունքում կախված է այս ոլորտի պրակտիկայի դրական կամ բացասական լինելը, այնպես էլ քաղաքացիական սեկտորի մասին: Լրագրողները, հասարակական կազմակերպությունները, լինելով հասարակության կարծիքը ձեւավորող եւ քաղաքացիական հասարակության տեսակետը կրողներ, պետք է նախաձեռնեն եւ օժանդակեն արդարադատության իրականացմանը՝ դատավորներին հուշելով, տեղեկացնելով, խնդիրներ բարձրացնելով եւ դրանց լուծման ուղղություններ մատնանշելով, ինչպես նաեւ խախտումները բացահայտելով եւ դրանք լայն քննարկման եւ քննադատության առարկա դարձնելով: Որպես նմանատիպ նախաձեռնության օրինակ կարելի է նշել 2011թ. մայիսին Տեղեկատվական վեճերի խորհրդի ստեղծումը, որը փորձագիտական եզրակացություն է կազմում դատական գործի առարկա դարձած արտահայտությունների վերաբերյալ՝ օգտագործելով եվրոպական դատարանի պրակտիկան եւ փորձելով այդպիսով օգնել դատարաններին յուրաքանչյուր կոնկրետ դատական գործի դեպքում որպես վիրավորանք կամ գրպարտություն դիտվող արտահայտությունների մեկնաբանման հարցում:

Այս անձինք խախտել են Ինֆորմացիայի ազատության կենտրոնի եւ քաղաքացիների տեղեկություն ստանալու իրավունքը 2011 թվականի առաջին եռամսյակի ընթացքում:

- **Մանուկ Վարդանյան-ՅՅ տրանսպորտի եւ կապի նախարար.**

Ուսանողուհի Լիլիթ Սեդրակյանը 20.05.2011թ. գրավոր հարցմամբ դիմել է նախարարին՝ խնդրելով տրամադրել տեղեկություններ այն մասին, թե այժմ ՅՅ-ում որքա՞ն երթուղային տաքսիներ են գործում եւ երբ դրանք կհամալրվեն նորերով: Հարցումը մնացել է անպատասխան: 22.06.2011թ.-ի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի (ԻԱԿ) նույնաբովանդակ հարցումը եւս մնացել է անպատասխան:

«Արժանապատիվ տրանսպորտ» քաղաքացիական նախաձեռնությունը 23.06.2011թ.-ին տեղեկատվություն ստանալու հարցում է ուղարկել ՅՅ տրանսպորտի եւ կապի նախարարին եւ ստացել թերի պատասխան: 2011թ.-ի հուլիսի 6-ին նույն հարցի վերաբերյալ ուղարկել է կրկնակի հարցում (մուտքի համար՝ 6742), որը մնացել է անպատասխան:

- **Սեյրան Օհանյան-ՅՅ պաշտպանության նախարար**

Ուսանողուհի Լիլիթ Սեդրակյանը 20.05.2011թ. գրավոր հարցմամբ դիմել է նախարարին՝ խնդրելով տրամադրել տեղեկատվություն այն մասին, թե 2010-2011թթ.. ընթացքում ՅՅ զորամասերում տարբեր պատճառներով քանի՞ զինծառայող է մահացել եւ ի՞նչ միջոցառումներ են ձեռնարկվում նման միջադեպերից խուսափելու համար: Ուսանողուհու հարցումը մնացել է անպատասխան: 22.06.2011թ.-ին ԻԱԿ-ը նույն հարցումը ուղարկեց նախարար Սեյրան Օհանյանին, որը նույնպես մնաց անպատասխան:

- **Արմեն Երիցյան- ՅՅ արտակարգ իրավիճակների նախարար**

ՅՅ արտակարգ իրավիճակների նախարարն անպատասխան է թողել ԻԱԿ-ի 25.05.2011թ.-ի հարցումը, որով ԻԱԿ-ը խնդրել էր տրամադրել, թե կա՞ն արդյոք նախարարության տնօրինության տակ փաստաթղթեր, որոնք գաղտնագրծվել են 2010թ.-ին, եւ եթե կան, ապա խնդրել էր տրամադրել այդ փաստաթղթերի պատճենները:

- **Արթուր Գեւորգյան-Երեւանի քաղաքապետարանի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչության պետ**

Արթուր Գեւորգյանը անպատասխան է թողել լրագրող Արման Ղարիբյանի 23.06.2011թ.-ին Երեւանի քաղաքապետարանի պաշտոնական էլեկտրոնային հասցեին ուղարկված հարցումը, որով լրագրողը տեղեկատվություն էր ուզում, թե ներկայումս քանի՞ մանկապարտեզ է գործում Երեւան քաղաքում եւ 2000 թվականից մինչ այսօր քանի մանկապարտեզ է փակվել: Ի դեպ, լրագրողը զանգել եւ ճշտել է, որ հարցումը ստացել են:

- **Արմեն Թադեւոսյան- «Համալսարանականներ» համատիրության նախագահ**

Համատիրության նախագահն անպատասխան է թողել Ինֆորմացիայի ազատության կենտրոնի 13.06.2011թ. համատիրության գործունեությանը վերաբերող հարցումը: Անպատասխան է մնացել նա-եւ ԻԱԿ-ի 30.06.2011թ.-ի կրկնակի հարցումը:

- **Արման Խաչատուրյան- «ՀայՓոստ» ՓԲԸ գլխավոր գործադիր տնօրեն/ արդեն նախկին/**

«Մարշալ Բաղրամյան համատիրության» նախագահ Ռոբերտ Մկրտչյանը 12.10.2010թ.-ին դիմումով դիմել է Արման Խաչատուրյանին, սակայն մինչ օրս պատասխան չի ստացել: 26.05.2011թ. ԻԱԿ-ը հարցում է ուղարկել՝ խնդրելով տրամադրել տեղեկատվություն, թե ի՞նչ փուլում է գտնվում համատիրության նախագահի դիմումը եւ ի՞նչ ժամկետում նրան կտրվի պատասխան: Հարցումը եւս մնացել է անպատասխան:

Freedom of Information Week September 21-28, 2011



In more than 100 countries where FOI laws have been adopted and applied, every year the last week of September is devoted to the Right to Know. During this week the civil society groups organize various events aimed at encouraging openness and transparency of the government .

From 21-28 September 2011, for the first time the Freedom of Information Center organized Freedom of Information week in Armenia on the occasion of its 10th anniversary. The main aim of the Freedom of Information Week (FOI week) was to broadly present to the public the right to freedom of information, the mechanisms of its implementation and the enforcement process of the Law on Freedom of Information. Within the frames of the FOI week the following events have been organized by the FOICA in 2011:

- **21 September 2011-** Public campaign dedicated to the 20th anniversary of the Republic of Armenia and the 10th anniversary of the FOICA's foundation: this day, the FOICA's staff and the students of the Yerevan State University (YSU) distributed flyers and booklets about the right to know.
- **22 September 2011-** Presentation of the new web project concerning the complete statistical picture of the FOI field (www.givemeinfo.am) took place. Presentation of the outcomes of the "Freedom of Information in Armenia" country-wide monitoring.
- **26 September 2011-** Public launch of the modernized websites of 10 regional administrations of Armenia was organized in Hrazdan, Kotayq region.
- **28 September 2011-** The FOI Week was completed by the FOI annual "Golden key and rusty lock" FOI award ceremony. This year, in addition to traditional nominations, on the occasion of the FOICA's 10th anniversary, ten special prizes were awarded to the organizations and authors of the best initiatives for their efforts to establish and develop freedom of information in Armenia. See details: <http://www.foi.am/en/about-award/>.

Freedom of Information Center of Armenia launches new website

The Freedom of Information Center, in collaboration with the OSCE Office in Yerevan, the US Agency for International Development (AID) and Hellix Consulting Group, has launched a new website in Armenia.

Introducing the new web resource available at Givemeinfo.am, Stephen Brager, the head of USAID Democracy and Governance Office, said it will enable citizens to follow the government bodies activities aimed at the protection of their right to freedom of information.

The Center's president, Shoushan Doyodoyan said the website will make the application follow-up procedures more transparent. The head of Hellix Consulting Group, Aram Mkhitarian, added that the new internet tool is linked to the social networking sites.


www.givemeinfo.am website was developed by the FOICA as an on-line mechanism to promote the transparent work of state and local self-government bodies. We do not criticize or analyze. We demonstrate the statistical picture of the freedom of information sector in Armenia, according to you requests.

This site presents statistic picture of how the information holders (state bodies, local self-government bodies, state offices, state budget sponsored organizations, organizations of public importance) enforce the right to freedom of information.

The web project also gives an opportunity to everyone who has applied to any information holder by a FOI request to input into the site his/her information request and all related documents. As a result, citizens' FOI requests are also included in the statistics, presenting the full picture of the freedom of information in Armenia.

Here, you can:

- See the entire statistical picture of activities in the freedom of information sector, as well as both positive and negative results per annum - all



related to state and local self-government bodies, state budget sponsored organizations, as well as the organizations with public functions.

- Create your information request case. Complete the appropriate application form, insert copies of required documents, and your case will become part of the freedom of information database.
- Familiarize yourself with separate pages related to activities of each unit in the freedom of information sector. Your case will be displayed on the page of the specific supervision unit you searched for: a statistical picture will be produced based on given answers related to your request addressed to that unit.
- Discuss and Comment on the results, as seen on the website.
- Share Cases and statistical data with the public through social networks.

Presentation of the Websites of the 10 Regional Administrations

On September 26 in the regional administration of Kotayk in the city of Hrazdan the presentation of the modernized websites of the 10 ARM regional administrations took place. The new websites were prepared in the framework of “Access to Information for Community Involvement” project implemented by “Freedom of Information Center of Armenia” NGO with the financial support of USAID Armenia.



During the presentation ARM First Deputy Minister of Territorial Administration Vache Terteryan stated, “Information resources with quite big opportunities have been created. Using the modern technological solutions it has become possible to make a lot of information about a specific region and community accessible for the public. We hope that the websites will be operative, will ensure contact with the public, will allow citizens to learn not only about the decisions of regional administrations, but also about those of community and municipality leaders and aldermen, hence, promoting transparency in the activities of local self-government bodies”.

“Armenia is striving to improve its e-governance system. It is an honor for us to support the development of similar websites for regional administrations that will be relevant to the international standards of freedom of information and particularly to the ARM “Law on Freedom of Information”, stated USAID Armenia Chief Executive Steven Bragger.

Kotayk Regional Administrator Kovalenko Shahgaldyan said, “The modernized websites, indeed, will promote the publicity of the activities of the Regional Administration and the more transparent organization of public awareness activities. The websites will be a best promotion for the more effective communication between the state government system and the public”.

FOICA President Shushan Doydoyan underlined the importance of the fact that these modernized resources provide broad opportunities for regional administrations to fulfill their duties – “with self-initiative make the information under their possession accessible for the public”.

All the information subject to mandatory publication and of public importance is posted on the websites. In the website users may read about the FOI legislation, as well as track their information requests, letters and applications. The websites were created and developed by “Helix Consulting” company.

FOI Annual Award Ceremony 2011

The Freedom of Information Center's annual "Golden Key and Rusty Lock" award ceremony took place on September 28, 2011 – the International Right to Know Day – which wrapped up the Freedom of Information Week launched on September 21. This year, the ceremony was dedicated to the 10th anniversary of the FOICA.



On September 28, 2011, the independent jury awarded the following institutions Golden Keys, as a symbol of openness and transparency:

- Positive Award for the institution/agency that was best applied the Armenian FOI Law was presented to the Ministry of Education and Science.
- The Ministry of Justice official website www.moj.am was recognized as the best official web site in terms of access to information.
- Positive award for the best official initiative ensuring freedom of information was presented to Kotayq Regional Administration.
- Positive Award for a NGO that best utilized the right for access to information was presented to the "Victims of the State Needs" NGO.
- Positive Award for the journalist/author of the

best FOI related article was awarded to Mr. Arman Gharibyan from "Lragir" on-line newspaper.

- Positive Award for the media outlet most actively covering FOI issues was presented to the news agency www.PanArmenian.net.
- Positive Award for the media outlet most actively covering FOI issues was presented to the on-line project www.hra.am.

Rusty lock awards, as a symbol of secrecy, were presented to the RA State Revenue Committee and the "Hamalsaranakanner" Condominium for the most unrealistic official answers.

On the occasion of the 10th anniversary of the FOICA, 10 special awards were given to those organizations, which have contributed significantly to the development of freedom of information in Armenia.

www.foi.am

“The FOI Annual Award Ceremony increases the public’s oversight of state institutions. It makes them work more openly and be more accountable to the public. For many institutions this is a good chance to develop their work, review their shortcomings and correct them,” said FOICA president Shushan Doydoyan. “At the same time this event promotes and encourages citizens, journalists and NGOs to become advocates for the right to be informed and exercise their legal rights under the Law on Freedom of Information,” she noted.

The winners of positive and negative awards were decided by the independent jury represented by 9 organizations in the FOI sphere. The selection criteria for the most open and secret agencies can be found at <http://www.foi.am/en/award-standards>.

The Award Ceremony was organized by the Freedom of information Center of Armenia through USAID support.



The First FOI Song

http://www.youtube.com/watch?v=cJWYv_9XVos

Freedom of information already has its own song, the author of which is the leader of the "VOX" Group Aram Ryan. For the first time the song was performed live by Aram Ryan on September 28, 2011 at the Freedom of Information Award Ceremony.

“Give Me Info” song, lyrics

I don't want you to ever lie to me.
Let me hear the truth, no matter how bitter it is.
There are problems that we need to solve together,
Because if you keep hiding them, we will all fail.

So I fight and I demand:
Give me info...
Undisguised and first-hand.

I have been dreaming to live in a just society.
But justice and lies can't co-exist.
I'm an intelligent being and I long for freedom.
But I need some info on how to be free.

So I fight and I demand:
Give me info...
Undisguised and first-hand.
Let's save the truth from the chains of deception.

Information is the light that will reign again.
Information is our strength and our might.
Together, we can change the life in our society.

So I fight and I demand:
Give me info...
Undisguised and first-hand.

Online Public Notifications are Free and more Effective

Head of the Freedom of Information Center of Armenia Shushan Doydoyan stated, "I might say that a technically good working website: www.azdarar.am has been created. Now the only problem is to make it really serve its purpose, so that all the official notifications will be published on everyday bases.

The "Law on Online Public Notifications", which was adopted in 2007, anticipated that all the notifications defined by Law must not only be printed in newspapers and disseminated via television, but also an official website was to be created for public notifications. Because of technical issues, including the incompleteness of the e-governance system, at that time the Law could not be implemented. As a result, for a long time the Law was left on papers. And only on 17 February, 2011, in order to comply with the requirements of the Law, the ARM Government passed N174-Ն decision about "Defining an electronic format for presenting the text of public announcements, and an order for receiving announcements subject to online public notification, passing them to the web administrator, publishing these announcements in the website, and archiving them."

On 1 April the www.azdarar.am website was launched for public notifications. Head of the Freedom of Information Center of Armenia Shushan Doydoyan stated, "I might say that a technically good working website has been created. Now the only problem is to make it really serve its purpose, so that all the official notifications will be published on everyday bases.

And the task of journalists, NGOs and other citizens will be to watch the law implementation process. It is very important that the source will be one, and tenders and suchlike documents will appear in this website. It is also important that for publishing an announcement every citizen and legal entity, who has an e-signature, instead of turning to newspapers and spending money, can publish it here for free."

In the www.azdarar.am website one can find, for example, reports from foundations, OJSCs, NGOs,

or an announcement about a company's liquidation, etc. The website also contains information about election outcomes, announcements of electoral commissions, information about state procurement processes, etc.

According to Chief of ARM Government Staff Davit Sargsyan's evaluation, freedom of information is a vital necessity for every democratic society. In this regard the new website is a step forward for presenting official information in a more operative and systemized way. "Imagine a court case, where one side has to appropriately notify the other party about an argument. However, the second party is missing, which happens often. Then the text of that announcement can be published in azdarar.am, and by law it will be considered an appropriate notification."

In the "Main Page" and "About Us" sections of the website one can find information about the website's activities, application forms, and the last updates. In the "Announcements" section one can view official notifications, reports, vacancies, etc.

"Such information is subject to publication in this website, which, according to some law must be published in the press. For example, the "Law on Procurements" anticipates that information regarding procurements until 2013 must be published in the press. Thus, this same information must be accordingly published in azdarar.am. However, if I want to sell my house and want to publish this information, and it is not a requirement of a law, then this announcement, according to the current order, cannot be published in this website. Hence, those announcements are published, which are anticipated by law," clarifies ARM Deputy Minister of Justice Aram Orbelyan. In order to publish an announcement one can print out the application form from the

www.foi.am

website, fill it out, then take the text of the announcement to the State Register Agency of Legal Entities of the Staff of the Ministry of Justice (49/3 Komitas, Yerevan, Armenia), and provincial residents can visit the regional centers of the State Register. And if you have an e-signature you can publish every announcement yourselves.

“Sections accept the announcements and pass them to the appropriate branches. Here the announcements is first checked, to avoid obvious falsifications, then they publish the announcement in the right section of the website, so that a procurement announcement does not appear next to the announcements about NGOs. This has two purposes. One is that when searching, people can find information easily. The second is to send correct announcements through subscription,” said Aram Orbelyan.

According to the government decision, the web administration must publish announcements within two business days. If that same announcement will appear in newspaper only for one day and in one newspaper, and it is also possible that you might not manage to buy the paper, then in azdarar.am the information stays for ever, and anytime one can easily find the information s/he wants. In order to find information fast and easily, you can search it by keywords or by date, as well as by the type of information and announcer.

In order to subscribe for website updates, you need to put your e-mail in the appropriate field, select at least one announcer and type of announcement, and click “Subscribe”. As an alternative, one can also use RSS. This way you can periodically receive e-mails containing information that you need and are interested in.

“For example, if you are planning to participate in procurement processes, you can subscribe for that section and every time when a new announcement appears in that section you will receive an e-mail notification. Or if you are conducting an NGO monitoring and you are interested in NGO reports. This allows being informed about news, changes or any other information that you might be interested in, without visiting the website every day,” stated Deputy Minister of Justice Aram Orbelyan.

Today, unlike press publications, this website is free. However, even if certain fees are anticipated, then, as the Ministry assures, that price will not exceed the fee charged by print media. Aram Orbelyan added, “We will periodically research to find out the website’s mechanisms that are useful and accessible for people, because it is possible that the website is very informative and good but people cannot use it. Our goal is to have a maximum simple but progressive website.”

The website was created and launched by “Helix Consulting” company. As stated head of the company Aram Mkhitarian, when creating the website they took into consideration the international standards. “We find it important that when a citizen enters the website s/he faces absolutely no difficulties in finding his/her way through. We also considered the font size and the subsections. There is an internationally accepted standard – when you make more than a couple of steps and still don’t find the section you are looking for, then the website is incorrectly constructed.” Your complains, comments, suggestions, and points of view about the website can be sent to moderator@azdarar.am, or you can call 010 20 17 25.

Realizing the freedom of information and another not less important law requirement – maximum easy information publication implementation – today Chief of the ARM Government Staff Davit Sargsyan thinks that the best option is the Internet. “Two years ago the number of Internet users increased dramatically in Armenia. According to our studies annually about 200.000 people visit official websites. It is important that we be effective before the citizen demands that from us. We should always be one step ahead,” concluded Davit Sargsyan.

By` Diana Karapetyan

Black List 2011, 2nd Quarter (April-June)

These officials have violated the human access to information right during the second quarter of 2011.

- **Mr. Manuk Vardanyan - Minister of Transport and Communication:**

On 20 May, 2011 student Lilit Sedrakyan had sent a written inquiry to the Minister, asking for information about the current number of public transports in Armenia and when they will be replaced by new ones. The inquiry was left unanswered. The FOICA's 22.06.2011 request with the same content was also left unanswered.

- **Mr. Armen Yeritsyan - Minister of Emergency Situations:**

ARM Minister of Emergency Situations Yeritsyan left the FOICA's 25.05.2011 inquiry unanswered, where the Freedom of Information Center of Armenia was requesting for information whether there were documents under the Ministry's possession, which were made unclassified in 2010, and if there were any then the Ministry was asked to provide their copies.

- **Mr. Seyran Ohanyan - Minister of Defense:**

On 20 May, 2011 student Lilit Sedrakyan had sent a written inquiry to the Minister, asking for information about the number of soldiers that for different reasons died in ARM detachments in 2010-2011, and what steps are taken to avoid such incidents. The student's inquiry was left unanswered. On 22 June, 2011 the FOICA sent the same request to Minister Seyran Ohanyan, which was also left unanswered.

- **Mr. Arthur Gevorgyan - Head of the Information and Public Relations Department of Yerevan Municipality:**

Arthur Gevorgyan did not answer to journalist Arman Gharibyan's 23.06.2011 inquiry that was sent to the official e-mail address of Yerevan municipality. With this inquiry the journalist was asking how many kindergartens are currently operating in Yerevan and how many had been closed since 2000. By the way, the journalist had called and checked that the inquiry had been received.

- **Mr. Armen Tadevosyan - President of "Hamalsaranakanner" county:**

Armen Tadevosyan did not answer to the FOICA's 13.06.2011 inquiry about the activities of the county. The FOICA's 30.06.2011 double inquiry was also left unanswered.

- **Mr. Arman Khachaturyan - Chief Executive Director of "HayPost" CJSC (ex-director):**

On 12 October, 2010 president of "Marshal Baghramyan County" Robert Mkrtychyan turned to Arman Khachaturyan, but has not yet received an answer from him. On 26 May, 2011 the Freedom of Information Center of Armenia sent an information request asking in what stage was president of "Marshal Baghramyan County" Robert Mkrtychyan's application and when it will be answered. This inquiry was also left unanswered.

www.foi.am
www.givemeinfo.am

«ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ԶԿ

FREEDOM OF INFORMATION CENTER OF ARMENIA

Հասցե/ Address: ք. Երեւան, Փ. Բյուզանդի 1/3, 4-րդ հարկ
4-th floor, 1/3 P. Buzand str., Yerevan, Armenia
Հեռ./Ֆաքս, Tel/fax: 560 360
Էլ. փոստ/ e-mail: foi@foi.am
Կայք/Website: www.foi.am